



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LEN
1771

203

11/4/99

203 w

1999

Handwritten text in a cursive script, possibly a signature or a short note, located in the upper left quadrant of the page.





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ Ե Ն Ո Վ Ա Փ Է Ի

ԳՔՍՈՒՀԻՈՅՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ

ՀԱՐԱԳՐԵԱՅ

Հ. ՎՐԹԱՆԷՍ Վ. ՊՈՒՏՈՒՐԵԱՆ

Ի ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1105/



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

1858

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՅԱՅԴԱՄԱՆԸ

ԳԱՅԻԱՆԷ ՏԻԿԻՆ ԱՄՊԱՐԵԱՆՑ

ՍԻՐԵԼԵԱՅՆ ԻԻՐՈՑ

Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ Ո Ր Դ Ի Ո Ց

ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ

ՆՈՒԻՐԷ ԶԱՅՍ ԱՐՁԱՆ

Ի ՅԱԻԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ր Ո Վ Ո Ց



91771-60

29 1777

1881



Ա.

Եկայ աշխարհ բան չի գիտցայ
Ինչուան եօթը տարուան եղայ .
Անցնէր օրերս երազի պէս ,
Չէի գիտեր թէ ինչ եմ ես :
Տեսածս ամէն էր մութ աղօտ ,
Օ ի նոր կ'ըլլար ինձ առաւօտ .
Սիրտս անհաստատ , սէրս անմիտ էր ,
Եւ զգայութիւնս էր հոգւոյս տէր :
Եւ արեւուն երբ լոյս ծագէց ,
Բացաւ աչքերս , մութն հալածէց .
Բայց 'ի մարդոյ վախ չունէի ,
Ոչ Լստուծոյ սէր գիտէի :

Իրաւ ճանչցայ թէ ես մարդ եմ
 Եւ մարդկու թիւն ինչ է չիտեմ .
 Աիրտըս անմեղ՝ աչքս էր խաղի ,
 Աերս դիս կարծես հուր կը վառի :
 Բարեկամներս չէի ճանչնար ,
 Իմ կամքս ընողն սիրտըս կ'որսար .
 Ավ որ խըրատ տալ ինձ կ'ուզէր ,
 Կարծես սըրով զիս կը զարնէր :
 Արլած ծաղկած ծառի նրման ,
 Սարդիկ ինձի երնէկ կուտան .
 Իմ ծընողացս մէկ հատ զաւակ ,
 Եւ մէն սիւսիանքս ունիմ արձակ :
 Իսկ երբ եղայ տասը տարուան ,
 Թուշերս կարմիր կեղև նուան ,
 Եւ մօթն աչքերս ժողվեց իրեն ,
 Եւ սրսրտը կեւ զիս դեռ չիտեմ :
 Անայնու թեան խելքըս տուած ,
 Կ'ուզեմ քալել հագուած սրգուած .
 Հայլին առջևս միշտ կ'առնէի ,
 Եւ ինձ միայն կը հաւնէի :
 Բայց տակաւին սիրտս էր անմեղ ,
 Դեռ չարու թիւն չէր գրտած տեղ .
 Տարուէ տարի միտքս արթընցաւ ,
 Սուտ աշխարհիս հետ կապուեցաւ :

Ընոյշ ձայներ երբ լսեսի ,

Պարել խաղալ կը սկսեսի .

Սիրտս աշխարհէս չէր կըշտանար ,

Մեռնիլ որուն միտքը կ'իյնար :

Երբ տասնըջորս տարուան եղայ ,

Տեսայ իմ սիրտս տակնու վրայ .

Չար կըրքերուս եղայ գերի ,

Կամքիս ամէն ուզածն ըրի :

Բայց խղճմտանք զիս կը տանջէր

Թի՛ս իմ գործքերս կարդի մէջ չէր .

Վարքս հաւատքիս երբ յարմար չէ ,

Հարկաւ ամէն ըրածս ծուռ է :

(Օր մը երբոր մինակ նրստած ,

Միտքրս կուգար ամէն ըրածս ,

Ինչո՞ւ կ'ըսեմ ասանկ կ'ապրիմ ,

Ետքս ինչ կ'ըլլայ թէ որ մեռնիմ :

Ըս մտածմունք ինձ շատ ազգեց ,

Ըմէն խընտում սրտէս կըտրեց .

Մէջ ներսի գիտ կ'իմանամ ցաւ ,

Ինչո՞ւ օրերս մեղքով անցաւ :

Գիշեր ցորեկ աչքերս կուլայ ,

Ինկայ առջին Ըստուածածնայ .

“ Ո՛վ տիրածին կոյս մայր , կ'ըսեմ ,

Հողիս մարմինս քեզ կը յանձնեմ :

Հասիր, մայր իմ, ինձ յօգնութիւն,
Դու օգնական ես խեղճերուն .

Մեղաց աղտերն ինձմէ սրբէ,
Եւ զիս քեզի առ որդեգրէ :

Տեսնեմ հասաւ վերին շնորհք,

Ար ալ մարմնոյս չունենամ հոգ .

Հոգիէս թանկ չունիմ այլ բան,

Ըշխարհիս փառքն է ընդունայն :

Մարգրիտ, գոհար, ոսկի, արծաթ,

Ինչ որ ունիմ մարմնոյս 'ի զարդ,

Ընի ամէնն յօժար կամօք,

Ըղբատներուն տըլի ձեռօք :

Օարդերս թողի մարդարտաշար,

Հոգւովս եղայ աղքատ խոնարհ .

Հայրս էր իշխան քաղաքաց տէր,

Իմ մեծութիւնս լոկ Յիսուս էր :

Բայց ինչ ցաւեր գլխուս եկան,

Ինչ նեղութիւնք դէմրս չելան,

Հորրս մօրրս աչքէն ընկայ,

Ըմէն տեսնող վըրաս խընտայ :

Օե՛ծ ալ կերայ ես անխընայ

Երբեմն եղայ արիւնջուայ .

Բայց Յիսուսիս սիրոյն համար

Ըջքիս դիմաց բան չերևնար :

Լ՛մէնքն եղան ինձ խրատտու ,

Չար լեզուներ քան զսուր հատու .

Ո՛հ , սրբաբա մէջ բացին վերքեր ,

Ու վազցուցին արեան գետեր :

Լ՛յլ Տէրն անանկ լեզուիս տայր բան

Որ պատանձին ամէն բերան .

Ով որ կուգար խօսիլ իմ հետ՝

Լ՛մօթապարտ կը դառնար ետ :

Բայց ինչ օգուտ , երբոր տեսայ

Ի՞նչ ամենուն բերանն ընկայ ,

Հայրըս մայրըս կը հառաչեն ,

Գիշեր ցորեկ արցունք թափեն .

Ուստի ձայնըս վար քաշեցի ,

Նորէն ես զիս զարդարեցի .

Նըւիրելով կամքս Յիսուսիս ,

Վըշտօք , ըսի , չարչարէ զիս :

Օ՛հ ճրջմարիտ խաչիդ բարձող

Լ՛՛ գլխովին կամքն ուրացող .

Ու երբ ինքզինքն անարգ սեպէ ,

Բոյ սուրբ շնորհաց ցօղ կը վայլէ :

Յօղեա յիս Տէր սուրբ արիւնէդ ,

Մի բաժներ զիս օրհնեալ կամքէդ .

Լ՛ըւն մեղքերս , սրբէ զհոգիս ,

Չըլլամ գերի սուտ աշխարհիս , :

Լյսպէս կեցայ քիչ մը ատեն՝
 Որ ազատիմ բամբասուելէն .
 Բայց ծընողացս սիրտն անհանգիստ ,
 Ինծմէ գանգատ ունէին խիստ :
 Տեսնեմ որ մ'ալ մայրըս լալով ,
 Բացաւ բերանն հառաչանքով .
 « Գե՛նովափէ դուստր իմ , ըսաւ ,
 Ա՛ռզէս ըլլալ սրբտիս իմ ցաւ :
 Գու աչքերուս լոյսն ես միակ
 Ա՛ռզէս թողուլ զիս անզաւակ .
 Գե՛նովափէ , լըսէ ձայնիս ,
 Մի ցաւագէներ վըշտերով զիս :
 Բեզի համար մենք գանձեցինք
 Ինչք ու պատիւ , ամէն բարիք .
 Չէ՛ս ողորմիր դու մեր վըշտաց
 Չունիս որդւոյ սիրտ դիւրազգաց :
 Ախտիւք ստացանք ըզքեզ , որդեակ ,
 Եւ արարչին տըւինք մենք փառք .
 Ա՛ռզէս 'ի սուգ փոխել անանց ,
 Օ դւրախու թիւն քու ծընողաց .
 Ի՛նչ է այդ որ միտքըդ դըրեր ,
 Միթէ մեզի չէ՛ս ողորմիր .
 Լստուած ըզքեզ մեզ լոյս ծագեց ,
 Ինչո՛ւ վառած կայծն անցրնես .

Բստեղծողին տուած պարգև
 Ըրհամարհել՝ չէ մեղք թեթև .
 Վեզ որ ստեղծեց այդչափ տեսքով ,
 Մեղք է ծածկել տրխուր քօղով :
 Թէ չես խորհիս դու զմեր օգուտ ,
 Գիտցիր վընաս է այդ հոգւոյդ .
 Օ ի մեզ ինչ շահ որ զքեզ ծընանք ,
 Թէ որ քեզմով չուրախանանք :
 Բստեղծողիդ հազար փառք տանք ,
 Տըւաւ ըզքեզ մեզի պարծանք .
 Հասակդ երկայն իբրև շուշան
 Փայլուն աչքերդ աստղ աննրման .
 Եարդոս քըրքում վարդ մանուշակ ,
 Վան զամէն խունկ հօտդ անուշակ .
 Ար մէկ պարծանքդ ըսեմ գովեմ ,
 Ախնամ կ'ըլլայ Բստուծոյ դէմ :
 Մինչ աս տարիքդ որ հասուցի ,
 Ա՛հ , ես ինչէր չիքաշեցի .
 Եաղկի նրման երբ բացուեցար ,
 Ինչո՞ւ կ'ըսես հարս չեմ ըլլար :
 Բոլոր աշխարհ երնէկ կուտան ,
 Ար լոյս եղար մեր խաւար տան .
 Ինչո՞ւ նորէն մըթընցընես .
 Աւ մեր սրտերն սըգով լեցնես :

Թե որ հողիդ փրկել կ'ուզես ,
 հարս ըլլալէն ինչ կը վախես .
 Շատ աղջիկներ քեզի նման ,
 Լ՛շխարհք մըտած արդար եղան :
 Ավ դըստրիկ իմ հընազանդէ ,
 Յաւագին մօր ձայնին լըսէ .
 Նայէ մահուս պատճառ չըլլաս՝
 Ար փուճ տեղը վերջը չողբաս , :
 Լ՛սոր նման ուրիշ խօսքեր ,
 Լ՛րտասուագին ողբով կ'ըսէր .
 Իր լացերովն սիրտը ճըմլէց ,
 Լ՛ղի արցունք աչքէս վազէց :
 Քիչ մը ատեն ես լուռ կեցայ ,
 Մօրըս սիրտը ինչուան իջնայ .
 Ետքը՝ «Մայր իմ , մի լար , ըսէ ,
 Ես արտասուացդ չեմ արժանի :
 Ա՛րսես Լ՛ստուած քեզ տըլաւ մեզ ,
 Ղըշմարիտ է գիտեմ և ես .
 Բայց դու ինչո՞ւ այսպէս կ'ողբաս ,
 Լ՛յս փոխարէնն իրեն կուտաս :
 Օ աւակ սիրուն , կ'ըսես , ծընար
 Լ՛չքերդ փայլուն զերթ աստղ պայծառ .
 Բայց աչքերէս ինչ շահ հողւոյս ,
 Երբ խաւարի ջնորհաց իւր լոյս :

Անայն է գեղ սուտ աշխարհի ,
 Ծաղկի նման շուտ կը թուամի .
 Մարդը դրսանց բան մը կարծես ,
 Գարնան բացուած վարդի մը պէս .
 Բայց թէ խելքով լաւ մտածենք ,
 Ի՞նչ ցաւալի բան կը տեսնենք .
 Անայնու թիւն են և պատրանք ,
 Արովք խաբէ ըզմեզ աշխարհք :
 Ըրիւն քրրտինք իրաւ մըտար
 Մինչ աս տարիքս որ զիս տեսար .
 Դու զիս ծընար , այլ Տէր պահեց ,
 Եւ սրբտիս մէջ զիւր սէր վառեց :
 Մարդիկ քեզի տան երանի ,
 Ի՞նչ կը հաւտաս ամէն բանի .
 Ըմենուս տէր Նստուած ինքն է ,
 Մարդկանց գովեօտ բոլոր սուտ է :
 Մենք մեր ծնողաց պարտական ենք ,
 Պէտք է որ միշտ զիրենք պատուենք .
 Ըլ Տէր միայն կօչեմք զՆստուած ,
 Ընոր ձեռացն եմք արարած :
 Թէ և ծընողք զիս ծըներ են ,
 Հողիս մարմինս Յիսուսիս են .
 Աստի պէտք չէ թողում զՅիսուս ,
 Ծնողաց վրայ դընեմ իմ յոյս , :

Ըս խօսքերըս ըսած ատենս ,
 Կարծես կայծեր թռուչի բերնէս ,
 Մօրըս աղիք խանձոտեցան ,
 Ը՛յլ իմ վերքերս նորոգուեցան :

Սիրտըս եղաւ տակնուվրայ ,
 Ը՛քէս արցունք գետօրէն գայ .
 Թողուց իմ մայրս ելաւ գրնաց ,
 Ը՛հ , իմ սիրտս ալ հետը գրնաց :

Մէկէն հայրըս վերայ հասաւ
 Աղբով լալով իմ ոտքս ընկաւ .
 Եւ աս ջանք ըրի որ հանեմ վեր ,
 Բայց նա խօսքիս մըտիկ չընէր :

“ Գե՛նովափէ , ով զաւակ իմ ,
 Օ՛արկ զիս , ըսաւ , որ հօս մեռնիմ .
 Ը՛ռաջ ձեռքովդ զիս հողը դիր ,
 Վերջը գրնա դու վանք մըտիր ,” :

Ը՛ն ատենը լաւ իմացայ ,
 Ար յ՛ստուծոյ շիկոչուեցայ .
 Վերուցի միտքս ըստեղծողիս ,
 Իւր սուրբ կամացն յանձնեցի զիս :

“ Հայր իմ , ըսի , հրնազանդ եմ ,
 Ես ձեր կամաց չեմ կենար դէմ .
 Ը՛ստուծոյ կամքն ըլլայ օրհնեալ ,
 Բարւոյս ես դէմ կրնամ դառնալ ,” :

Երբոր այս խօսք բերնէս լըսեց ,
 Ի՞նչ ցընծու թեամբ զիս համբուրեց .
 Մէկէն մոռցաւ իր ամէն ցաւ ,
 Սիրտն ալէկոծ ծով մը դարձաւ :
 Բայց ետքն յանկարծ սև տըրտմութիւն ,
 Պատեց երեսն ու մահու գոյն .
 Գըլորեցաւ ինկաւ գետին ,
 Եւ թալկացաւ գոյն երեսին :
 Ի՞նչ տեսարան աչքիս զարկաւ ,
 “ Բատուած , ըսի , աս ի՞նչ եղաւ .
 Ո՛հ ես իմ հայրս զարկի ցաւօք
 Ես մեռուցի , վա՛խ , իմ ձեռօք ” :
 ‘Այլիմ չորս դիս մարդ մը չիկայ ,
 Որ գոնէ գայ սյուտ մը ջուր տայ .
 Բողոր յոյսըս մարդէ կըտրած ,
 Աղաչէի առ տէր Բատուած :
 Չիյտեմ ինչպէս դիմացաւ սիրտս ,
 Ես զարմանամ իմ ըրածիս .
 Ի՞նչ տարիքը աղջիկ տըղայ ,
 Ինչպէս առի գիրկըս նըստայ :
 Այցիս ձայնէն բացաւ աչքեր ,
 Երեսս ’ի վեր կը ծիծաղէր .
 “ Դուստր իմ , կ’ըսէր , չըլլայ վախնաս ,
 Բան չեմ եղած խելքս է վըրաս ” :

Օ առայքն ամէն ներս վազեցին
 Լ՛մէն դարման ընենք ըսին .
 Տայց նա մէկէն ելաւ ոտքի ,
 «Տան մ'ալ , կ'ըսէր , պէտք չէ ինձի :
 Իմ սիրեցեալ Գենովափէ ,
 Օ իս զերծուցիր յամէն ցաւէ .
 Թող ամէն տեղ գրբուին թըղթեր ,
 Թող գան ժողովին ազգականներ .
 Օ ի այս օրըս մեծ է ինձի ,
 Տան զամէն օրս որ անցուցի .
 Ըտեղծողիս տամ հազար փառք ,
 Արպէս թէ նոր եկայ աշխարհք :
 Լ՛յսուհետեւ չըսեմ բընաւ ,
 Թէ մայրըս զիս անբաղդ ծընաւ .
 Լ՛սկից եւել չըլար մեծ բաղդ ,
 Օ ի գաւաիս է ինձ հընազանդ , , :



Բ.

Թող ամէն մարդ սորվի ինձմէ ,
 Ինքիր գլխուն խոստմունք չընէ .
 Օ ի երբ խօսքէդ ետ կը դառնաս ,
 Կեանքդ ցաւերով կ'անցնի 'ի լաց :
 Սպիրիտիոն Վալատինեան ,
 Ինձի պատրաստ փեսայ գրտան .
 Իշխան էր նա արքայազարմ ,
 Լ'մէն ձիրքով ճոխ ու փարթամ :
 Կոմսեր , դուքսեր ու իշխաններ
 Մեր հրճուանաց եղան ընկեր .
 Ինչ մեծ հանդէս էր որ եղաւ ,
 Բոլոր քաղաքն 'ի թունդ ելաւ :
 Լ'մբողջ ամիս մ'ըրին հարսնիք ,
 Չէր տեսնուած այնպէս հարկինք .
 Լ'ղքատ տրնանկ ու խեղճ մարդիկ ,
 Ինչ օրհնեմքներ ինձ կարդացիք :

Լիննչ աղջիկք որչափ կային ,
 Բերին ամենքն հոն ժողվեցին .
 Հայրըս եղաւ ամենուն տէր ,
 Լնող տրդոցն ապրուստ կապէր :
 Երկու հարիւր հարս զարդարուած ,
 Իրենց փեսին ձեռքէն բռնած ,
 Եկեղեցին եկանք մրտանք ,
 Լմէնքս մէկ օր պրսակուեցանք :
 Թէ հոգւոր թէ մարմնաւոր ,
 Լմէն հանդէսն էր փառաւոր .
 Լմենուն սիրտ պատեց խնտում ,
 Հրձուանք բերկրանքն էր անպատում :
 Բայց իմ սրբաբա հուրն անտուչոր ,
 Կայրէր մըրկէր զանձն իմ բոլոր .
 Օ ի խղճմտանքս զիս կը տանջէր ,
 Թէ ինձ ուխտէս դառնալ պէտք չէր :
 Եւ երբ զայս լուծ առի կամաւ ,
 Պէտք է կըրեմ յօժար՝ անցաւ .
 Բստ Բստուծոյ պատուիրանին ,
 Սէր կապեցի իմ փեսային :
 Բանի որ ես էի մինակ ,
 Սիրոյս Բստուած էր նըպատակ .
 Յետ Բստուծոյ սէր ծընողաց ,
 Ինչպէս օրէնքն են պատուիրած .

Հիմայ ունիմ ես ուրիշ պարտք՝
 Արեւ զփեօայն իմ խանդակաթ .
 Օ ի երկուքնիս մի եմք մարմին ,
 Ինչպէս երդմամբ որ յանձն առինք :
 Յիսուս , հազար փառք տամքեզի ,
 Ար ինձ տըւիր ընկեր բարի .
 Քո սուրբ անուանդ փառաց նախանձ ,
 Իւր սրբտին մէջ միշտ է վառուած :
 Եւ ինչ ըսեմ ես իմ բաղդին ,
 Ար իմ ծրնողքս չիխընտացին .
 Դեռ նոր բացուած էի ծաղիկ ,
 Օ անոնք մահուն աարաւ ժանիք :
 Ա՛հ , ինչ յոյսեր վրաս ունէին ,
 Ինչպէս բընաւն գնաց հետերնին .
 Իմ ցաւերս ալ նորոգուեցան ,
 Ա ըշտաց եղայ ընդունարան :
 Ես իմ փափաքս մէկդի դըրի ,
 Ար ծրնողաց կամք կատարուի .
 Եւ ըրածէս ինձ ինչ օգուտ ,
 Երբոր ցաւոց պատեց զիս մուծ :
 Սպիրիտին իմ սիրելիս ,
 Թէպէտ յաջորդ նստաւ ծնողիս ,
 Եւ աւանդ մեզ և զուր վաստակ ,
 Օ ի մընացինք մենք անզաւակ :

հ. 041 /

Օ ի թէ ժառանգ չունեցանք մենք
 Որ մեր պարծանքն իրեն ձրգենք,
 Ինչո՞ւ ծրնողքս այնչափ լացին,
 Ինչո՞ւ աշխարհ զիս մըտցուցին :
 Ի՞նչ նախատինք չէի լըսեր,
 Որ կուսութիւն կ'ուզեմ ընտրել .
 Ժառանգ չունինք ըսին լացին,
 Իմ Յիսուսէս զիս բաժնեցին :
 Ի՞մենք զաւկի կը փափաքին,
 Որ սուրբ վախճանն է պըսակին,
 Ինձ ի՞նչ օգուտ՝ աշխարհ մըտայ,
 Երբոր Լստուած զաւակ չըտայ :
 Եւ հապետաց մէկ օրհներէն ալ,
 Օ՞ աւկըներով էր բազմանալ .
 Ես զըրկեցայ աս օրհներէս,
 Ինչո՞ւ դարձայ իմ խոստմունքէս :
 Եւ լես ինչպէս գանգատ կրնեմ,
 Երբ իմ չարեաց պատճառ ես եմ .
 Ի՞նչպէս չողբամ մեղքիս վրայ .
 Ի՞մէն յոյսէս ես զըրկեցայ :
 Իրաւ ընկերս կը սիրէ զիս,
 Վաղցր խօսքերն ոյժ են սըրտիս,
 Եւ լ ամլութիւնս պատիժ մեղքիս,
 Ծանակ ըրաւ ամենուն զիս :

Բողոր աշխարհ թող ինձ վայ տայ ,
 Որ աս անէծքն իմ վրաս կայ .
 Ո՛վ որ տուած խօսքէն դառնայ ,
 Պատիժն իրմէն պակաս չըլլայ :
 Անդանիներ և թռչուններ ,
 Ըմէնքն ունին իրենց ձագեր .
 Աիրեն սիրուին ճուռողելով ,
 Օ ինչ քաղցրագոյն քան մարց գորով :
 Այլով մարդուս սիրտը բացուի ,
 Ես որչափ լամ այնքան փակուի .
 Ըջուրներէս հեղեղաբար
 Գետք արտասուաց դան անդադար :
 Ո՛ւր որ երթամ ո՛ւր որ նստիմ ,
 Ես կըրակով միշտ խանձոտիմ .
 Գիշեր տանջիմ երազներով ,
 Յերեկ ծրփի միտքս իբրու ծով :
 Գարնանային անոյշ հողմեր ,
 Չեն բժըշկեր սրտիս վերքեր .
 Խոխոջալով վազեն ջրեր ,
 Ընա՛ղ ինձի , զի չեմ լըսեր :
 Երբ թռչուններ քաղցր երգեն ,
 Իմ սիրտս աղիքս կը կըտրատեն .
 Արքա կանչեն իրենց ձագեր ,
 Ը՛հ , ես անզոյգ լոր եմ դարձեր :

Գոյն գոյն փայլին տեսօք ծաղկներ ,
 Լ՝ՍԼ չեմ առնուր ես քաղցր հոտեր :
 Ո՛հ , արևուն ճառագայթներ ,
 Ինչո՞ւ սրբտիս մէջ չեն ծագեր :
 Երբ շողշողէ լոյս լուսնակին՝
 Յողան ծրփին ալիք ծովին ,
 Լ՝մէն տեսնող ցընծայ բերկրի ,
 Ես եմ միայն աւաղելի :
 Լ՝նցնի ձրմեռ , ծաղկի գարուն ,
 Իմ չի հալիր սրտիս արիւն .
 Յետ ամսուան կուգայ աշուն ,
 Մարդ կըզմայլի պրտուղներուն :
 Ես անպտուղ դարձայ չոր ծառ ,
 Փոխան պտղոյ մեղքերս փուշ չար .
 Երբ զիս հընձէ մահուն դանակ ,
 Ո՛ւր կը մընայ զարմիս պարծանք :
 Լ՛հ , բերնիս մէջ չորցաւ լեզուս ,
 Խաւարեցաւ աչքերուս լոյս .
 Լ՛լ ես չունիմ տեղէ մը յոյս ,
 Մեռնիմ ցաւօքս , տէր իմ Յիսուս , :
 Լ՛սանկ խօսքեր ըսած ատենս ,
 Բողոր մարմինս կ'երէր ներսէս .
 Եւ հըրաբուղիս լերան մը պէս ,
 Կուխ ու կրակ կ'ելլէր սրբտէս :

Մէյմ'ալ յանկարծ ժողվեցի զիս ,
 Եւ զարմացայ ես իմ խօսքիս .
 “ Վայ ինձ , ըսի , ինչ եղայ ես ,
 Եւ ինչ խօսքեր կ'ելլեն բերնէս :
 Երբ պատիժ է քաշածս գիտեմ ,
 Պէտք է զըղջամ , մեղայ գոչեմ .
 Ինչո՞ւ բերնիս եկածն ըսեմ ,
 Եւ նորէն Տէրս զայրացրնեմ :
 Ա՛հ , քանի մէկ ես կոյր մընամ ,
 Մեղքիս վրայ նոր մեղք բառնամ .
 Երբ Լստուծոյ կամքն է գիտեմ ,
 Ար՞ուն՝ ուսկից գանգատ կ'ընեմ :
 Մի՞թէ իմ Տէրս չէ ողորմած ,
 Ե՛րբ նեղելոց նա չէ լրսած .
 Երկնից սիրոյն է արժանի
 Ար իւր մեղաց վըրայ ցաւի :
 Չէ յիրաւի , չունիմ զըղջում ,
 Երբոր իմ կամք ես չըթողում .
 Թի՛ս ստուգիւ մեղքերս ճանչցայ ,
 Քաշած ցաւերս քիչ կ'երևնայ :
 Աւստի տուր Տէր պատիժ մեղացս ,
 Սուրբ բարկութիւնդ հեղ իմ վրաս .
 Ա՛րչափ կամքդ է՝ զիս հոս պատժէ ,
 Չըլլայ մեղքերս քեզմէ զատէ ,” :

Երբ այս խօսքերս սրբտէս կ'անցնէր ,
 Իմ սէ ցաւերս կը փարատէր ,
 Ու աչքերէս աղբիւրի պէս
 Աղէց արցունք սիրտս հովահրէց :



Գ .

Աչքէս արցունք դեռ չէր դադրած
 Մինչ թմրութիւն մ'եկաւ վըրաս .
 Ար տեսնէի դէմքս կեցած
 Լստուածածինն զՅիսուս գրկած :
 Փայլէր չորս դին ճառագայթներ ,
 Լուսէն աչքերս կը մթազնէր .
 « Գենովափէ , ըսաւ ինձի ,
 Ինչո՞ւ այդպէս լաս տրտմալի :
 Յաւերդ չըլլան վըշտաց առիթ ,
 Խաչով միայն փրկի հոգիդ .
 Տեառն Յիսուսի սիրոյն նըշան
 Եղած է միշտ խաչին ճամբան » :
 « Ո՛վ տիրածին Մայր իմ , ըսի ,
 Հոգիս քեզմով միայն փրկի .
 ()գնէ ինձի՝ փրկի հոգիս ,
 Յաղտից մեղաց սըրբէ դու զիս :

Կարծես քիչ էր առջի մեղքերս ,
 Լեւեցուցի նոր նոր վերքեր .
 Ա՛հ վայ ինձի , զիս կորուսի ,
 Բնդդէմ Փրկչիս գանգատ ըրի :
 Մեղայ գոչեմ , ո՛վ Տիրամայր ,
 Շընորհք խընդրէ ինձի համար .
 Եւ միածին յորդուոյդ գթած ,
 Կերում հայցէ վասն իմ մեղաց :
 Մեղայ , Տէր իմ , 'ի գուժ դարձիր ,
 Բու սուրբ արեամբդ զիս գնեցիր .
 Չարչարանօք քո ըստացար ,
 Յիշէ՛ վասն իմ 'ի խաչ ելար , , :
 Տեսնեմ Յիսուս ծիծաղերես ,
 Չեռքն երկրնցուց շոյեց երեսս .
 Սիրտս լեցուեցաւ երկնից սիրով ,
 Երկրի սուտ սէրն ինչ անոր քով :
 Կորէն ձեռքը դրրաւ զլիսոյս ,
 Սըրբեց յինէն զաղտերն հողուոյս .
 “ Մեղքերդ , ըսաւ , ես քաւեցի
 Բու խնդիրքներդ թող կատարուի , , :
 Մայրն Լստուծոյ սուրբ կոյս Մարիամ ,
 Կրկնեց այս խօսքս երեք անգամ .
 “ Կը կատարէ Յիսուս բաղձանքդ ,
 Լսլմիշտ խաչով անցնի քու կեանքդ , , :

Այս խօսքն իրաւ սուրի նրման՝
 Դառն խոցեց զսիրտս համայն ,
 Այլ խնդութեամբ էի լըցուած
 Եւ կ'օրհնէի ըզտէրն Աստուած :
 Մէյմ՝ ալ յանկարծ բացի աչքերս ,
 Կարծես զարթնում խորունկ քրնէս .
 Տեսնեմ լեզուս դեռ չէր դադրեր ,
 Եւ աչքերէս արցունք քամուէր :
 Այլ միտքս այնպէս էր զգածուած ,
 Որ չեմ գիտեր ինչ է ըսած :
 Հազիւ կըրցայ ես զիս ժողովել՝
 Տեսած տեսիլքս միտքրս բերել :
 Մէկէն գնացի եկեղեցին ,
 Բազկատարած ինկայ գետին .
 Կ'ըսեմ, « Ա՛լ մայր կոյս Տիրածին ,
 Դու ես յոյս իմ բօլորովին :
 Ո՛հ քաղցր էր ինձ քեզ միշտ սիրել ,
 Այլ արգելին զիս իմ մեղքեր .
 Երբ սըրբեցաւ մեղքերուս աղտ ,
 Այսուհետեւ սիրեմ ազատ :
 Ի՛նչպէս ըլլամ շընորհակալ ,
 Որ կ'ամրչնամ դէմըդ կենալ .
 Այլ զի կոչիս դու մայր գըթած ,
 Ողորմութեան դուռդ է միշտ բաց :

Երբ մտածեմ պարզևդ անգին
 Որ պարզևեց սէր քոյ սրտին՝
 Ուրախութեամբ սիրտ իմ ցընծայ ,
 Օ՛ր ըզՓրկիչ իմ ես տեսայ :
 Ա՛հ , որպիսի մեծ գուժ ունիս ,
 Ի՛նչպէս սիրով լըսես ձայնիս •
 Մեղաւորին դարձ զղջում տաս ,
 Եւ քու շնորհք չառնես պակաս :
 Քանի քանի փորձանքներէ ,
 Օ՛րս փրկեցիր յամէն չարէ •
 Քու խընամոց չեմ արժանի ,
 Բայց սէրդ անչափ է մայրենի :
 Ես ապերախտ եմ և անարգ ,
 Որ չըձանցայ շնորհացդ յարգ •
 Բայց դու ձանցուր , ո՛վ տիրուհի ,
 Չըլլայ հոգիս իմ կորսըւի ,, :
 Ասոր նման ուրիշ խօսքեր ,
 Ա՛նհատաբար սըրտէս բղխէր ,
 Ի՛նչ խնտում էր որ ըզգացի ,
 Ա՛զդողն միայն գիտէ բարի :
 Ուրախութեամբ ելայ ժամէն ,
 Չէի դադրեր միշտ փառք տալէն ,
 Ա՛նցան օրերս ուրախ զըւարժ
 Չըսի մէկուն չըգիտցաւ մարդ :

Սպիրիտին տեսնելով զիս

Որ ես ուրախ եմ իմ գործիս ,

Օ արմանալով կը հարցընէր ,

Ուրախութեանս պատճառն ի՞նչ էր :

“ Տէր իմ , ըսի , ի՞նչ կը փորձես ,

Ուրախութիւնս միթէ չուզես .

Երբ Մատուծոյ յանձնեցի զիս ,

Ուրախութեամբ լեցուեցաւ սիրտս ,” :

Երբոր այս խօսքս լսեց բերնէս ,

“ Սէր իմ , ըսաւ , խնդրեմ ներես .

Ի՞նչպէս չուզեմ ուրախ ըլլալդ ,

Երբ ցաւ է ինձ անընդհատ լացդ ,” :

“ Այսուհետեւ , ըսի , չիլամ ,

Յոյսըս բոլոր Մատուծոյ տամ .

Եւ դու բնաւ մի ճշգոհար՝

Ինչո՞ւ Մատուած ժառանգ չիտար ,” :



Դ.

Բայց տես յանկարծ ինչեր կ'ըլլայ,
 Երկրիս վրայ անշարժ բան կայ.
 Շատ օր չանցաւ հասան թրղթեր
 Թի մօտ տեղուանք զարկին թուրքեր:
 Մէկէն խորհուրդ ըրին ծերեր,
 Որ գան ժողովին զօրապետներ.
 Լմէն մէկը իր զօրքէն զատ
 Օ ինուոր գրեն հարկէ ազատ:
 Արովհետև թըշնամինիս
 Խախտել կ'ուզէ սուրբ հաւատքնիս,
 Պէտք է ազգով մենք դէմ ելլենք՝
 Լըիւննիս ալ չիտընայենք:
 Հարիւր քսան մեծ ցուկանաւ,
 Մէկէն նոյն օր զարդարուեցաւ.
 Բոլորովին կազմ և պատրաստ,
 Թի քաշողներ փորձ և զգաստ:

Արողուեցաւ օրն ելլելու ,
 Ըմենքն եկան հոն ժողվելու .
 Ստան նաւու նաւապետներ ,
 Բացին իրենց գոյն գոյն դրօշներ :
 Գնդապետներ կեցան ցամաք ,
 Աւր էր զօրաց մեծ հրապարակ .
 Հարիւր քրսան զօրավարի
 Աթաբուն հազար զօրք կը գրուի :
 Հինգ հինգ հարիւր հոգի մէկ գունդ ,
 Ըմեն գնդի տարբեր հագուստ .
 Հագած զըրահ և սաղաւարտ ,
 Օկնքերն փայլին ոսկի արծաթ :
 Սպիրիտին հագաւ վըրան
 Իւր քաջ նախնեաց զէնքերն լըման .
 Երբոր ելաւ զօրքին դիմաց ,
 Երկինք գետին կարծես թընդաց :
 “ Կեցցէ իշխան Պալատինեան ,
 Կեցցէ գոչեն միաբերան .
 Դու ես , կ'ըսեն , հայր մեր և տէր ,
 Քեզ կեանքերնիս ըլլայ նըւէր ” :
 Հոն նաւերէն՝ հոս բերդերէն ,
 Թնդանօթներ օդը հընչեն .
 Փող և թըմբուկ նըւագարանք ,
 Պատերազմի զարնեն նըւագ :

Լ. յն անհամար բազմութեան ձայն՝
 Որ կը կանչեն միաբերան ,
 Կարծես փրփրած ալիք ծովին
 Եայուերուն հետ կը ծեծկրւին :
 Բոլոր գեղերն մարդ չիմնաց ,
 Լ՛մենքն եկեր հոն են ժողված .
 Հնարք չըկայ ճամբայ գտնել ,
 Եւ բազմութիւնն ճղքել անցնել :
 Եկեղեցւոյ պաշտօնեաներ ,
 Կերոն բռնած թափօր ելեր .
 Լ՛ետարան խաչ առջևէն ,
 Կարգաւ կ'երթան սաղմոս կ'երգեն :
 Հայրապետներ զգեստնին հագած ,
 Խաչ գաւազան ձեռքեր բռնած .
 Սուրբ սպասուց նաղչն ոսկեթել ,
 Օ երթ մարգարիտ փայլին զարդեր :
 Կանոնիկոսք և քահանայք ,
 Ուխտի մանկունք և սարկաւազք .
 Լ՛մենքն ոսկի դիպակ հագած ,
 Արբոց պատկերք տանին գրրկած :
 Եւ թիանձունք կրօնաւորք ,
 Երկնակենցաղ սուրբ ճգնաւորք ,
 Մաքուր փիլոնն առած վըրան ,
 Լ. յս հանդիսին մեծ զարդ եղան :

Դպրոցները սորվող տղաք ,
 Լ՛մենքն հաղուած կարմիր ճերմակ ,
 Հրեշտակային իրենց ձայներ ,
 Բոլոր աշխարհ զարմացրնէր :
 Երիտասարդք , կոյսք սրբբանուէր
 Լ՛րք և կանայք մանուկ և ծեր
 Լ՛ռ հասարակ բերաննին երգ ,
 Ղիւղք ձիթենեաց ամենուն ձեռք :
 Լ՛յս հանդէսով մինչև 'ի լոյս ,
 Պրտրտեցան պարրսպէն դուրս •
 Լոյսն որ ծագեց մրտան քաղաք ,
 Ժողովեցան 'ի հրապարակ :
 Հոն առաջուց էր պատրաստած ,
 Պատարագի ամէն ըսպաս •
 Մեծ հանդիսով պատարագեց ,
 Քաղքին առջի աւազերէց :
 Լ՛մենք գետնի վրայ ընկած ,
 Հեծեն ձայնիւ հառաչանաց ,
 Սպիրիտիոն առաջ անցաւ ,
 Իշխաններովն հաղորդուեցաւ :
 Սերջը կարգաւ ամենքն եկան ,
 Մինչ 'ի կէս օր հաղորդեցան ,
 Բոլորն հարիւր հազար հոգի ,
 Արոնք որ ծով մտնեն պիտի :

Յետ հողևոր սուրբ կերակրոյն
 Հարկինք եղաւ հոն զօրքերուն .
 Լ՛ղնիւ փափուկ կերակուրներ ,
 Լ՛յն մեծ կոչունքն կը զարդարէր :
 Սպիրիտիոն սեղանէն վերջ ,
 Իշխանները քովը կանչեց .
 Գողոն անուն ըզմեծ իշխանն ,
 Վերակացու դըրաւ իր տան :
 Լ՛նկէ ետքը զօրքը ժողվեց ,
 Ռոճիկներն առատ բաժնեց .
 Մըտան ժամը օրհնուեցան ,
 Ետքը ծովեզրն հաւաքուեցան :
 Սպիրիտիոն տըլաւ նըշան ,
 Յուկանաւերն արձըկուեցան .
 Կապոյտ ձերմակ առագաստներ
 Կայմերուն ծայրն կը ծածանէր :
 Լ՛Տ , երբ հընչէր բաժանման փող ,
 Լ՛ըդեօք մընաց մարդ չըլացող .
 Ի՛նչ սրտաշարժ էր տեսարանն ,
 Ի՛նչ արցունքներ յերկիր հեղան :
 Օ՛ր այնպէս խեղճ չալեն երգեն ,
 Որ քարերն ալ ՚ի լաց շարժեն .
 Մայր , քոյր , եղբայր , սիրականներ ,
 Լ՛մենք ցաւօք կը բաժնուէր :

Գառներու պէս որ կ'որոշեն

Չադեր մայրեր զատ քաղցրնեն ,

Այն խեղճ մայրեր այնչափ մայեն ,

Մինչև շատը կուրնայ լալէն :

Ըրեն 'ի մուտս երբ խոնարհեր

Հոմն ու ժոմնալ էր ըսկրսեր .

Թնդանօթներ ներսէն դըրսէն ,

()դն անդադար հընչեցրնեն :

Ծածկըւեցան նաւերն մուխէն ,

Մութը պատեց՝ ուշ էր ատենն .

Ճամբուողներն կ'երթան առաջ ,

Այն ճամբողին՝ չի դադրիր լաց :

Ա՛րը լացով 'որը ողբով

Գարձան տեղերն մութ գիշերով .

Ես ալ դարձայ մրտայ 'ի տուն ,

Բայց մերժեցաւ աչքերէս քուն :



Ե.


Մարդուս գլխուն բան մը չեկած ,
 Ի՞նչ աղէկ էր լըսած սորվածն .
 Եւլ անօգուտ , որչափ սորվի
 Դեռ անկատար մարդ կը սեպուի :
 Ա՛հ յերաւի դրժուար է մահ
 Որ զսիրելիս սե հողուն տայ .
 Եւլ քան ըզմահ դառն էր այս ցաւ
 Քունն աչքերէս ներս չըմըտաւ :
 Երբոր տեսայ մարդ չիմընաց ,
 Կը քրնանան յողնած դադրած ,
 Գացի մէկէն մատուռ մըտայ ,
 Հառաչանօք գետինն ընկայ :
 “Մայր իմ , ըսի , ո՛վ Տիրամայր ,
 Մի մանկութեան մեղքս երեսս տար .
 Պահէ զընկերս ՚ի փորձանաց ,
 Ասան Յիսուսիս անհուն արդեանց :

Թող չիպարծին անհաւատներ ,
 Օ մեզ կարծելով խեղճ ու անտէր .
 Օ Աստուած ճանչնան ամենազօր ,
 Բզտերն Յիսուս փրկիչ Տրզօր :
 Միշտ բարեխօս ըզքեզ ունիմք ,
 Քու գըթու թեանդ ապաւինիմք .
 Սուրբ կուսու թեանդ մաքուր կրնիք ,
 Օ արկ սրտերնուս որ սըրբըւինք ,, :
 Ըյս խօսքերով գիշերն 'ի բուն ,
 Ըքերս արցունք լացի արթուն .
 Ըռաւօտեան լոյսը հասաւ
 Չէր փարատեր իմ սըրտիս ցաւ :
 Եայիմ չորս դիս դեռ մարդ չիկայ
 Կամաց մ'եկայ խուցըս մըտայ .
 Խեղճ ու անձար եմ մընացած ,
 ()գնեա սուրբ կոյս, մայր իմ գըթած...
 Լոյսն որ ծագեց Գողթնիցէ կայ
 Ըատ իշխաններ հետը բերաւ .
 Բըռնեց ձեռքըս կ'ուզէր պագնել ,
 Տալով պատիւ ինչպէս հարկ էր :
 Բայց չեմ գիտեր ինչ պատճառաւ ,
 Միրտս անոր հետ չիկապուեցաւ .
 Օ ի միշտ երբոր զինք տեսնէի ,
 Ինձ թըշնամի համարէի :

Իր խօսքերուն չէի հաւնէր ,
 Կ'իմանայի միտքն էր աւեր .
 Միշտ ծուռ աչքով վըրաս նայէր ,
 Եւ ինչ յիշեմ իւր վրբ խօսքեր :
 Գող ըլլալը յայտնի ցըցուց ,
 Բոլորովին ամօթն վերցուց .
 Պարկեշտութիւնս գողնալ ուզեց ,
 Եւ ջիւս դըրաւ պարզենէր մեծ :
 Իր չար կամքին շատ դէմ կեցայ ,
 Օ իս յանձնեցի Եստուածածնայ ,
 Ճար չիգըտայ քաղքէն ելայ ,
 Հեռու տեղուանք բընակեցայ :
 Բայց անամօթն և աներես ,
 Ուր որ երթամ գայր ետևէս .
 Կարծէր միտքը չեմ իմացած ,
 Գըրով յայտնեց ամէն բան բայ :
 Յիսուս փրկիչ , Յիսուս տէր իմ ,
 Եսոր ձեռքէն ես ուր փախչիմ . . .
 Բերդի մը մէջ դացի նըստայ ,
 Զըլլայ , ըսի , քովըս մարդ գայ :
 Եւ նորանոր հանձարեց բան ,
 Ու պէտք եղաւ տեղըս դառնամ .
 Մէկ գիշեր մը մըտան 'ի բերդ ,
 Եւ քովս տեսայ ինքն ալ էր հետ :



справки и прочие пр., а также
затем же в том же направлении.



Աւզեմ չուզեմ թողի փախայ ,
 Ախացայ գըլխուս փորձանք մը դայ .
 Լնըզգամի ձեռք մատնեցայ ,
 Լստուած ինքնին ինծի ոյժ տայ :
 Բայց իմ սիրտըս չէր հանդարտեր
 Տակնուվըրայ միշտ կը ծրփէր .
 Եթէն ամիս էր ընկերս գընաց ,
 Ինչու , կ'ըսեմ , գիր չեմ առած :
 Չէի կարծեր որ կը ծածկէր
 Իմ փեսայէս եկած գըրեր .
 ()ր մ'ալ տեսնեմ եկաւ յանկարծ ,
 Չեռքը թուղթ մը սևով կնքած :
 “ Եաւ մը , ըսաւ , հիմա հասաւ ,
 Վեզ , տիրուհի , զայս թուղթ բերաւ .
 Լսկից 'ի զատ գիր չէ եկած ,
 Խընդրեմ տեսնենք ինչ է գըրած ” :
 Երբ սև կընիքն աչքիս դրոպաւ ,
 Ա՛հ իմ սըրտէս արիւն անցաւ .
 Լհուգողով բացի կարդամ ,
 Լւա՛ղ ինծի ինչ իմանամ :
 Օջրապետներ կը գըրէին ,
 Թէ մեծ իշխան մեր սիրելին ,
 Ի մէջնաւին մեռաւ յանկարծ ,
 Օջրքն է սըգով ալեկոծած :

6. Արբ. մնացինք, կ'ըսեն, անտէր
 Լ'նշուշտ այսպէս մեզ չէք ձրգեր .
 Լ'ուանց գըլխոյ չիքալեր ոտք ,
 Զըլլայ թողուք անտէր անոք :
 Պէտք է շուտով գըլուխ ընտրէք ,
 Ար չիմատնիմք թըշնամեաց ձեռք .
 Բայոր զօրքը կ'աղաղակէ ,
 Գողոն իշխանն թող մեզ իշխէ :
 Գարձեալ և զայս կը յայտնենք ձեզ ,
 Սպիրիտինն մեզի յանձնեց՝
 Գողոնն ըլլայ, ըսաւ, ժառանգ ,
 Իրեն թողում իմ գըլխոյս թագ :
 Լ'յս է եղեր Լ'ստուծոյ կամք ,
 Երկինք ձեզի տան երկար կեանք .
 Խնդրենք շուտով իմացընէք
 Օրք, զօրապետք ձեզ կը սպասենք , :
 Գեռ գիրն ամբողջ չիկարդացած ,
 Լ'չքերս մթնեց սիրտըս դողաց .
 Կարծես մէկը գըլխուս զարկաւ ,
 Լ'եզուս բերնիս մէջ համրացաւ :
 Բերենքսիվար ընկայ գետին ,
 Մահուան քրտինք ձակտէս թափին .
 Մեռաւ, ըսին, քովի մարդիկ ,
 Թողուն երթան մէկիկ մէկիկ :

Տէր չունեցող այսպէս կ'ըլլայ ,
 Միշտ իր երեսն պատին մընայ .
 Զուգէր մէկը վերան նայիւ ,
 ()ր մը առաջ կ'ըսեն մեռիւր :
 Մեռած ատենդ քովըդ կուգան ,
 Թէ որ ունիս տէր սիրական .
 Մեռնելէդ վերջ թէ գան թաղէն ,
 Լ՛յն ալ տիրոջդ պատիւ պահեն :
 Լ՛պա թէ ոչ մարդկային սէր
 Խաբեբայ է ո՛վ չիգիտեր .
 Վեղ սիրողներ աշխարհիս մէջ
 Զուգեն տեսնել մեռնելէդ վերջ :
 Թէ մեռելիդ վերայ կուլան
 Իրենց շահուն համար է այն .
 Այ թէ քեզմէ բաժնըւեցան ,
 Լ՛յլ զի իրենք զըրկըւեցան :
 Մէկն ալ երբ քեզ մեռած տեսնայ ,
 Իւր մեռնիլը միտքը կ'իյնայ .
 Աստի սիրտը վիրաւորած ,
 Իրեն համար է ողբն ու լաց .
 Պէտք չէ վըկայ այս խօսքերուս ,
 Բան չիմընաց չեկաւ գլխուս .
 Ղշմարիտ սէր բարեկամի ,
 Լ՛շխարհիս մէջ քիչ գըտնուի :

Եթէ ըսեմ որ սէր չիկայ,
 Ախնամ վըրաս շատ մարդ խընտայ .
 Բայց խնտացողն թող լաւ գիտնայ,
 Թէ ես անվարձ սէր չիգըտայ :
 Չիտեմ այնպէս որչափ ատեն,
 Մեռելի պէս մընացեր եմ .
 Մէյմ' ալ երբոր աչքըս բացի,
 Տեսնեմ սիրտըս թայցած կ'անցնի :
 Ո՛ր ձեռնասուն աղախիններս,
 Տաղար բարիք տեսնողք ձեռքէս .
 Մէկը չիկայ, եղան ցիր ցան,
 Պուտ մը ջուր ալ չիկայ որ տան :
 Թաղաւորներ ու թագուհիք
 Ունայնու թեամբ սուտ կը պարծիք .
 Ը՛հ, օրինակ առէք ինձմէ,
 Յետին աղքատն լաւ է մեզնէ :
 Սուտ աշխարհիս երջանկու թիւն,
 Չունի երբէք հաստատու թիւն .
 Մարդ չիգիտէր ի՞նչ խեղճու թիւն,
 Ի՞նչ փորձանքներ գայ մեր գըլխուն :
 Ինչեր չեկան իմ ալ գըլխուս,
 Խաւարեցաւ աչքերուս լոյս .
 Կիշերն հանգիստ չունէի քուն,
 Յերեկ լայի մինչ իրիկուն :

Ինչեր կ'անցնէր , ո՛հ , իմ մըտքէս ,
 Ի՞նչ մեծ ցաւեր չիտեսայ ես .
 Լ՛չխարհ մտնել չի ուզեր ,
 Լ՛յլ խաբեց զիս ծընողաց սէր :
 Պլիսուս դալիք դիտէի ես ,
 Լ՛յլ մատնեցայ ես իմ տեսքէս .
 Պէտք չէր դառնալ տըւած խօսքէս ,
 Լ՛յլ ծընողաց սէր զիս խաբեց :
 Պարտք էր ինձի ծնողքս պատուել ,
 Լ՛յլ հարկ չիկար աչխարհ մտնել .
 Լ՛հա եղայ ցաւօք լըցուած ,
 Օ՛ի խաբեց զիս սէր ծընողաց :
 Հայր իմ , մայր իմ , ա՛հ սիրելիք ,
 Եկէք տեսէք ձեր մէկ հատիկ ,
 Պատեցին զիս դառն ցաւեր ,
 Լ՛ս էր ինձի ձեր այնչափ սէր :
 Երնէկ էր դուք չըսիրէիք ,
 Բստեղծողիս սէրն էր հերիք .
 Սիրականէս զիս բաժնեցիք ,
 Լ՛յսպէս անտէր թողիք գացիք :
 Թի՛ն անգամ մը ես խընտացի ,
 Լ՛նոր տեղը բիւր հեղ լացի .
 Սըրտիս մէջ նոր վէրք կը բացուի .
 Սէր ծընողաց ի՞նչ շահ ինձի :

Չի թողուցին զիս իմ կամքիս ,
 Ար կենայի տրւած խօսքիս .
 Ես կուսու թիւն էի ուխտեր ,
 Ի՛նչ պէտք էր ինձ աշխարհ մըտնել :
 Հօր , մօր խօսքէն ետ չի դարձայ ,
 Աւխտըս թողի կարգը եցայ .
 'Նորա մեռան' ես մընացի ,
 Լացով սրգով օրերս կ'անցնի :
 Երսուն տարուան դեռ չեմ եղած ,
 Գլխուս չեկած բան չի մընաց .
 Հարս ըլլալէս ի՛նչ շահ ինձի ,
 Երբոր իմ քօղ սե ներկեցի :
 Ե՛ս չափ տարի ամուլ էի ,
 Օ՛գակի սիրոյն կը մաշուէի .
 Երբոր խընտամ ըսի յանկարծ ,
 Ե՛ն խընտումս ալ դարձաւ 'ի լաց :
 Յըղի ըլլալս մարդ չի մացած ,
 Պիտի լըսեն թէ որք մնաց .
 Ի՛նչպէս ցընծամ զօգակիս վըրայ ,
 Ե՛ս կէց էլել ի՛նչ ցաւ կ'ըլլայ :
 Ե՛ս աշխարհիս բերկրանքն ու լաց ,
 Միշտ է այսպէս իրար խառնած .
 Արախու թեան պէտք չէ հաւտալ ,
 Եւ կամ 'ի վիշտս անյոյս ըլլալ :

Երնէկ անոնց որ խաբուած չեն ,
Սուտ աշխարհիս խընտուճներէն .


Եւ երանի՛ սրգաւորաց ,
Որք սուրբ հոգւով են ըսփոփած :
Թէ իննդուժիւն թէ տրտմուժիւն ,
Յաստուծոյ գայ ամեն մէկուն .
Երնէկ կ'ըսեմ ես ան մարդուն ,
Որ անփոփոխ կայ հաստատուն , :

Երբ այս խօսքեր կը զուրցէի
Ես ինքիրմէս դուրս կ'ելլէի .
Հառաչանք մը գալով ներսէս ,
Կ'արթըննայի կարծես քրնէս :
Ար մտածեմ արդեօք ո՛ւր եմ ,
Ինչո՞ւ այսպէս այլայլեր եմ .
Արրտիս մէջը ինտուճ մը կայ ,
Բայց աչքերէս արցունք կուգայ :
Կարդացած գիրս ձեռքս եմ բռնած ,
Բայց չեմ յիշեր ի՞նչ կը գրուած .
Ընչափ լացերս այն իմ ողբեր ,
Բոլոր մըտքէս դուրս են ելեր :
Ձեռքի գիրըս հոն թողուցի ,
Ար մտածեմ ինքըս ինձի .
Չեմ իմանար ի՞նչ պատճառաւ
Միրտըս այնչափ այլայլեցաւ :

Ինքըս դարձայ ինձի կ'ըսեմ,
 Ինչո՞ւ նրստեր կը մըտածեմ.
 Ելայ դացի տանըս մատուռ,
 Մըտայ ես ներս՝ փակեցի դուռ :
 Ըստուածածնայ պատկերին դէմ
 Ինկայ գետին, կուլամ կ'ըսեմ.
 « Մի թողուր զիս, կոյս տիրամայր,
 Հիւանդ հոգւոյս դու միակ ճար » :
 Եւ այս խօսքերս ըսած ատենս,
 Կարծես լոյս մը կ'ելլէր բերնէս .
 Սիրտըս ջահի նման վառէր,
 Բարձրանայր լոյսն ամպերէն վեր :
 Իսկ այն ներքին ուրախու թիւն
 Մերժեց ամէն ցաւ տրտմու թիւն .
 Տեսայ հաւատքս իբր անշարժ վէմ,
 Ընդնկճելի թշնամեաց դէմ :
 Յոյս աներկբայ և հաստատուն,
 Յամեն վըշտաց կայր աննրկուն .
 Սիրտըս փրկիչի սիրով լըցուած՝
 Ես իմ վըրաս եմ զարմացած .
 Ընիւ անոյշ հոտ մ'ալ կ'առնեմ,
 Ըն մեծ հաճոյքն ինչպէս պատմեմ,
 Սիտքըս այնպէս էր ըզմայլած,
 Ար չեն տեսներ աչքերըս բաց :

“ Յիսուս , ըսի , հոգւոյս իմ սէր ,
 Քեզ հաւատամ Նստուած իմ տէր .
 Ի քեզ անկայ ես յարգանդէ ,
 Ընորհացրդ լոյս վըրաս ծագէ :
 Մինչ յետին շունչ կենաց իմոց ,
 Սառէ սէրըդ՝ պահէ անսիրձ .
 Յիսուս իմ տէր , փրկիչ Յիսուս ,
 Մեղաւորին միակ ես յոյս :
 Պատրաստ է սիրտս առ քեզ Նստուած ,
 Պատրաստ է կամքս քո հրամանաց .
 Պատժէ տանջէ ողբան կամքդ է ,
 Օ իս քու կամացդ համակերպէ ,” :
 Դեռ իմ խօսքըս չէր լըմընցած
 Նմուր ձայն մը առի մօտանց .
 Դարձայ տեսնեմ ո՞վ է կանչող ,
 Եւ մարդ չիկար եկող գացող :
 Մէկէն ձանցցայ թէ Մարիամ կոյս ,
 Մայրն Նստուծոյ իմ հոգւոյս յոյս ,
 “ Գենովափէ , կ’ըսէր , ելիր ,
 Սուտ է այն գիր որ կարդացիր :
 Օ ի զայն Գողոն ինք գըրեր է ,
 Ար քեզ խաբէ խայտառակէ .
 Զըլլայ հաւտաս դու իր խօսքին ,
 Փեսայդ ընկճեց զիւր թըշնամին :

Քիչ ատենէն դառնայ փառքով,
 Մտնէ քաղաք յաղթող զօրքով.
 Մեծ հանդիսով զինք կ'ընդունին,
 Բայց քու պատիւդ պարծանք խաչին :
 Օ ի ճըշմարիտ քրիստոնէին,
 Խաչն է միակ պատիւ անձին .
 Գլրկէ՛ դուստր իմ խաչըդ սիրով,
 Յիսուս փրկչիդ նըմանելով :
 Առէ լապտերդ կեցիր պատրաստ,
 Մի փնտռեր դուն հանդիստ քեզ աստ .
 Ար երկնաւոր անմահ փեսայդ,
 Օ քեզ ընդունի յիւրն առագաստ :
 Օ ի դու որչափ որ հոս տանջիս,
 Լ՛յնչափ փառօք հոն զարդարուիս .
 Լ՛յս է նըշան իւր սիրելեաց,
 Լ՛նոնք ժառանգ կ'ըլլան փառաց :
 Երբ այս խօսքերն կը լսէի
 Հըրձուանք 'ի սիրտ իմ զեղանի,
 Միտքըս այնպէս էր ըզմայլած,
 Ար չեմ գիտեր ո՞ր եմ կեցած :
 Մէյ մ'ալ քունէ զարթածի պէս,
 Տեսայ բան մը չիկայ առջևս .
 Իմացայ թէ տեսիլք տեսայ,
 Մարդ չիմացած տեղըս դարձայ :





Մըտածէի տեսած բաներս ,
 Կ'արմըննայի ես ինքիրենս .
 Լճխարհ այնպէս ելաւ աչքէս ,
 Չուզեմ մարդու տեսնել երես :
 Օ՛ի աշխարհիս ամեն մէկ բան ,
 Լաւ հասկըցայ է ընդունայն .
 Եւ Լ'ստուծոյ սիրոյն 'ի զատ ,
 Երջանկութիւն չունենար մարդ :
 Կամքս՝ Լ'ստուծոյ օրհնեալ կամաց
 Քանի որ չէր հրպատակած ,
 Ուզածըս ալ թէ կատարուէր՝
 Հանգստութիւնս հաստատուն չէր :
 Բայց այս ներքին սրբտիս բերկրանք
 Լ'յնպիսի ոյժ ազդեց ու կրակ ,
 Որ թէ տանջէն կրտրեն մարմինս ,
 Յաւ չեմ զգար իմ ներսի դիս :
 Օ՛ի Լ'ստուած է իմ զօրութիւն ,
 Կա ինձ 'ի վիշտս համբերութիւն .
 Հոգևով մարմնով եմ միշտ հանգիստ ,
 Երկիրս ինչպէս խրուովէ զիս :
 Լ'յս լոյս շնորհաց իմ սրտիս մէջ
 Հաստատ մընաց մինչև 'ի վերջ ,
 Կամքիս ընդդէմ ինչ ալ ըլլար ,
 Յաւ տրտմութիւն չէի ըզգար :

Ա՛ր են լացերն հառաչանքներս ,
 Վ՛ուն չէր մտներ գիշերն աչքերս .
 Հիմայ այնպէս ուրախ է սիրտս ,
 Ար չեմ ուզեր ինձ կարեկից :
 Բայց չար Գողոն զիս տեսնելով ,
 Ար կը քալեմ ուրախ սրբտով ,
 Լ՛յնպէս կարծեց թէ կամքն եղաւ ,
 Աւստի յանկարծ խուցրս մտաւ :
 Ծ՛ունկ կը չոքի ոտքրս կ'իյնայ ,
 Լ՛նգին ակունք ընծայ կուտայ .
 Լ՛նրզգամին խելքը գլխէն
 Բոլորովին թրուեր կըրքէն :
 Լ՛յլ ես մէկէն ժողվեցի զիս ,
 Լ՛րիութիւն մ'եկաւ սրբտիս .
 Ոտքի ելայ ծիծաղելով ,
 Կը հարցընեմ « Ո՛վ է մեռնող » :
 « Սէր իմ , ըսաւ , դու ողջ կեցիր ,
 Մի՞թէ գերը չիկարդացիր .
 Ես 'ի վաղուց ցանկայի քեզ ,
 Լ՛յսուհետեւ իմ տիկինս ես » :
 Երբոր այս խօսք ես լրսեցի ,
 Բարկութենէս զիս կորուսի .
 Լ՛ռի գերը պատրուտեցի ,
 Օ ինքն ալ տընէն վըզընտեցի :

Բըթին բերնին այնպէս զարկի ,
 Որ ահռաներն իրար կ'անցնի .
 “ Կորիւր , ըսի , դուրս ել տընէս ,
 Մէյմ'ալ չըլլայ հոս ոտք կոխես , ” :
 Եզուն բերնին մէջ կապուեցաւ ,
 Ինչպէս փախչիւն ինք չիմացաւ .
 Մէյմ'ալ զինքը ես չըտեսայ ,
 Կ'ըսեն բերնին եկած դուրս տայ :
 Բայց ինչ կ'ուզէ թող ինք զըուցէ ,
 Բսկեց վերջը իմ հոգըս չէ .
 Բաւական է որ պակսեցաւ ,
 Սիրտս ու հոգիս խաղաղեցաւ :
 Ընօրինին ըրած բաներ ,
 Ես կ'ամրջնամ բերան առնել .
 Թէ որ Բստուած չիխընայէր ,
 Ընչուշտ նա զիս գըլխէ հանէր :
 Ընոր համար այս բանս կ'ըսեմ .
 Օ ի Բստուծոյ միշտ է ընդդէմ :
 Պէտք չէ անձին մարդ վստահի ,
 Որ չըլլայ թէ մէկէն սահի :
 Օ ի փորձութեանց նա կը յաղթէ ,
 Որ 'ի յառթից հեռու քալէ .
 ()տար մարդու սէր չընդունիս
 Զըլլայ վերջը երիս մըրկիս :

2.

Օրհնեալ ըլլայ տէրն իմ Աստուած
 Ար զիս փրկեց յամեն չարեաց .

Շատ փորձանքներ հասան վերաս ,
 Բայց անվնաս ծընաւ տղաս :

Այս բանս իրաւ մեծ պարգև էր ,
 Փրկչիս սիրոյն ալ նըշանն էր .

Բայց իմ խընտուամս չէր կատարեալ ,
 Ար կ'ըսէին թէ մանչ ծընար :

Օ՛ի կատարեալ խնտում հօր մօր ,
 Չէ զաւակաց ընծայուած օր ,

Այլ երբ մեծնան բարի վարքով ,
 Եւ ժառանգեն օրհնենքներով :

Աստուածային բարեաց վերայ

Պէտք է որ մարդ ուրախ ըլլայ .

Այլ շատ անգամ 'ի բարւոյ չար

Երբ ելլէ դուրս , մենք ենք պատճառ :

Գիտենք զաւակն մեծ պարգև է ,
 Լ'նպրտուղ ծառն ո՞վ կը սիրէ .
 Բայց երբ դառն է պրտուղ ծառին
 Կացնին կ'ըլլայ ինքն ալ բաժին :

Նոյնպէս որդի չար ըստահակ ,
 Իւր ծրնողացն է անարգանք .
 Կ'ըսեն փուշէն չըլլար խաղող ,
 Տատասկէն թուղ ո՞վ է քաղող :

Քանի քանի հայրեր մայրեր ,
 Արգով իրենց խընտուժն ներկեր .
 Լաւ էր , կ'ըսեն , քար ծընէինք ,
 Քան այս պատժիս մէջ իյնէինք :

Երբ դժոխքին բացաւ բերան ,
 Սասանեց զիս ծրնողաց ձայն .
 Ինչ անէ՞քներ ինչ հայհոյանք ,
 Ա՛հ , կ'ըսէին , զաւկով կորանք :

Ե՛յս բանս բընաւ մըտքէս չելեր ,
 Լ'հով դողով սիրտս է երեր .
 Օ՛ի զինչ օգուտ ծընած տրղաս ,
 Երբոր տեսնեմ բաժին դիւայ :

Սարդուս բերկրանքն ըլլայ չափով ,
 Ախաճանն ալ միշտ միտք բերելով .
 Լաւ է վիժածն հողը պառկած
 Քան մկրտուածն դըժոխք գացած :

Ը ընորհ ունիմ պարգևողին ,
 Օ ի կը ճանչնամ զյարգ պարգևին .
 Վ ախրս միայն է պարգևէն ,
 Չիբաժնէ զիս պարգևողէն :

Եւ ոչ վայրկեան մ'եմք ապահով ,
 Արովհետև աշխարհս է ծով .
 Յանկարծ տեսնես կ'ելլէ քամի ,
 Տանի զարնէ յապառաժի :

Աստի պէտք չէ մենք վստահինք ,
 Չիկարծած տեղ յանկարծ սահինք .
 Փայտ փրկութեան խաչին կրնիք ,
 Լ'նով միայն մենք փրկըւինք :

Լ'յս վերջի խօսք ըսած ատենս
 Կարծես մէկը կ'ըսէր ներսէս .
 Վրրիատոսի սուրբ խաչափայտ ,
 Արդւոյդ վրան պահէ հաստատ :

Տասներորդ օր սըրբոյ զատկին ,
 Յորում էր տօն գիւտ սուրբ խաչին
 Եկան զտղայն մըկըրտեցին ,
 Սպիրիտիոն անուն գրին :

66 Գոնէ , ըսին , իր հօրն անուն ,
 Թող յիշատակ մընայ որդւոյն ,
 Ար մտքերնէս չելլէ բընաւ
 Ինչ որ նա մեզ բարիք ըրաւ ,” :

Արովհետև որ խաբուեր են

Չար Գողոնին շինծու թողթին .

Եւ ըզփեսայս մեռած կարծեն ,

Արդին հօրը ժառանգ կ'ուզեն :

Եւ յսպէս Գողոն արիւնկըզակ

Խաբեց զամենքն անխղճմտանք .

Բայց ինչ չարիք որ հանձարեց ,

Չարեաց պտուղն նախ ինք քաղեց :

Նա զիս մինակ խաբել կ'ուզէր

Որ իւր չար կամքն առաջ տանէր .

Սպիրիտիոն մեռաւ , կ'ըսէր ,

Բայց ձայնը դուրս ելլել չուզէր :

Երբ իր ուզած չաջողեցաւ ,

Եւ մեռածին ձայն դուրս ելաւ ,

Ուզէ չուզէ սուտն հաստատեց ,

Ես եմ ժառանգն ըսաւ քալեց :

Չէր գիտեր խեղճ ողորմելին ,

Թիչ ոչ երբէք զինքն ընդունին .

Թիչ որ մեռաւ Սպիրիտիոն՝

Կ'ըսեն չըլլայ իշխէ Գողոն :

Պէտք է մեզի ուրիշ ժառանգ ,

Արդին դընէ թող հօրը թագ .

Մեռած հօրը նոր է եղած՝

Մանուկ տրղան ժառանգ նստած :

Լ.յս բանս այսպէս որոշեր են ,
 Մեծամեծներն հին ցեղերէն .
 Լմենեին Գողոն չուզէն ,
 Թող քաղքէն ալ ելլէ կ'ըսեն :
 Եւ Պրրիմոս անուն ծերուն
 Որ սիրելի էր ամենուն ,
 Տըւին պատիւ տեղակալի՝
 Ինչուան տրղան յարբունս հասնի :
 Տասուերկու ծեր ընտրուեցան ,
 Որ ամեն բան իրենք հողան .
 Իրենց մէկը թէ դէմ դառնայ
 Պատուհասուի նա անխընայ :
 Լ.ս ծերերը ընտրուեցան ,
 Իբրու իշխանք ժողովըրդեան .
 Վերջը վիճակ երբ ձրգեցին ,
 Ելաւ վիճակն տասուերկուքին :
 Սահմանեցին Գողոնի դէմ ,
 Որ չիկենայ իրենց ընդդէմ .
 Ինն օրուան մէջ գործը տեսնէ ,
 Տասներորդին քաղքէն ելլէ :
 Իայց նա կ'ըսեն իրեք օր վերջ ,
 Չէ երևցած քաղաքին մէջ .
 Գիշեր ատեն նաւ մը կուգայ ,
 Կ'առնէ զինքը շուտով կ'երթայ :

Լ՝յլ զարմանամ ես իմ վերաս ,

Որ չիմացայ անձինս վրնաս .

Սպիրիտինն ողջ է գիտեմ ,

Ինչո՞ւ համար ես չիյայտնեմ :

Լ՝հա այսպէս մարդիկ շատ հեղ

Իրենք զիրենք մատնեն զուր տեղ .

Լ՝մեն բանի վերջ մրտաժես

Շատ փորձանքէ ըզքեզ փրկես :

Իայց ես շատ գէշ սրխալեցայ .

Երբոր ջրսի թէ ողջ է նա .

Պէտք էր նաև յայտնի ըսել ,

Թի՛ է զիս Վոդոն կ'ուզէր խաբել :

Լ՝յլ ես որչափ որ ամրջցայ ,

Լ՝յնչափ մարդկանց մէջ խաղք եղայ .

Թի՛ է որ աս բանս իմանային ,

Լ՝յսչափ չարիք չէր ծրնէին :

Իմ սխալմունքս ըլլայ խրրատ ,

Լ՝յսպէս փորձանք թէ գայ վերադ

Հանձարեղ մը մէկէն ընտրես ,

Լ՝մեն մէկ բան տեղովն յայտնես :

Թի՛ էպէտ իրաւ գրնաց Վոդոն ,

Իայց չար լեզուն թողեր էր հոն .

Վրրաս ջրուած բան չըմնաց ,

Օ՛իս համարին պատճառ չարեաց :

Ա՛հ, շատ անգամ դժբաղդաբար
 Մարդս է ինքիր չարեաց պատճառ .
 Բայց ուրիշէն զայն կարծելով,
 Էզուին կուտայ բամբասելով :

Ե՛սպէս Գողոն ամեն չարեաց
 Պատճառ ըլլալն էր իմացած .
 Բայց որպէս զի զինքն ազատէ,
 Իմ անուներս կը բամբասէ :

Ե՛յն սուտ գիրը որ ինձ տրուաւ,
 Կ'ըսէ եղեր, չկտեմ բընաւ
 Սպիրիտիոն ո՞ղջ է մեռած,
 Ե՛մենե ին ես չեմ լըսած :

Ե՛սոր նրման ուրիշ թըղթեր
 Կարդացեր է անմիտ բաներ .
 Իրեն այսպէս գըրած ըլլամ,
 Թէ փեսայիս թագ քեզի տամ :

Որո՞նն մըտքէն կրնար անցնիլ՝
 Օ ուր տեղն այսպէս բերան իյնիլ .
 Բայց զըպարտողն երբ է անխիղճ,
 Օ ըրպարտուողին ջանքն է ոչինչ :

Շատ մարդ, կ'ըսեն, չենք հաւատար,
 Բայց անոնց ալ ես չեմ հաւտար .
 Ե՛ստուած չընէ ոտքդ որ սահի,
 Սիրելիդ ալ ծուռ կը նայի :

Եւ թող մարդիկ զիս բամբասեն ,
 Ես չեմ խորշիւր եկած խաչէն ,
 Քրիստոս չեկած բան չիմնաց ,
 Նրնազանդ եմ փրկչիս կամաց :

Ետ օր չանցաւ հասան թրղթեր ,
 Յայտնուեցան ամեն սուտեր .

Սպիրիտիոն իրեն զօրքով ,

Ե ուտով դառնայ յաղթանակով :

Սարդ չիմրնաց չուրախացող ,

Բայց ծերերուն սիրտն ելաւ դող .

Ե մենք մէկդի թողին փախան ,

Օ իս թողուցին սրբոյն բերան :

Վողոնին խօսք սուտ չէր ըսին ,

Ա ըրաս ամեն բան կնքեցին .

Բացուեցաւ դուռ բամբասանաց ,

Կ'ըսեն ամեն բերնին եկած :

Սպիրիտիոն դեռ չըհասած ,

Վանի մը ծեր գան ընդառաջ .

Եւ կը ջանան օր ես չըսած ,

Յայտնեն իրենց անմեղ եղած :

Բայց իրենցմէ առաջ Վողոն ,

Ե ուտ մը նաւով հասեր էր հոն .

Սպիրիտիոն , կ'ըսեն , յանկարծ

Երբոր տեսաւ Վողոն եկած ,

Հարցուց մէկէն « Ինչո՞ւ եկար ,
 Լ'տ գալդ ինձի լաւ չերենար .
 Բսէ շուտով բան մի ծածկեր ,
 Սիրտս 'ի վաղուց վախի մէջ էր » :
 Գողոն այնպէս սկրսաւ լալ ,
 Ար տեսնողին ցաւը կուգար .
 Գլխուն մազեր կը փրրցընէր ,
 « Ա՛հ անբաղդ եմ , կ'ըսէր , ո՞վ տէր :
 Տերութիւնը ձեռքէդ ելաւ
 Գենովափէն պատճառ եղաւ .
 Լ'յս բանս վաղուց ես գիտէի ,
 Բայց յայտնելու կ'ամրջնայի :
 Բու երթալէն վերջը յայտնի
 Վ երուց ամօթն եղաւ լրկտի .
 Լ'չքովս տեսայ ամեն ըրածն ,
 Լ'լ ծածկելու բան չիմրնայ :
 Լ'յնչափ ողորմ յորդորանքներս ,
 Լ'մենեին անոր չազդեց .
 Սպիրիտիոն կ'ըսէր մեռաւ ,
 Զիյտեմ ուսկից մանչ մ'ալ ծրնաւ .
 Սպիրիտիոն դրրաւ անունն ,
 Սա է , կ'ըսէ , տէր ամենուն .
 Սիրելիներն իշխան կարգեց ,
 Լ'նոնց ձեռքով զիս հալածեց :

Լ՛հա այս է իմ ըսելիք ,
 Չըսես վերջը՝ ինչո՞ւ չըսիք .
 Բսի ինչ որ ինձի հարկ էր ,
 Լ՛յլ քու կամացդ դու ինքդ ես տէր ,” :

Սպիրիտին այս խօսքերէն
 Լ՛յնպիսի ցաւ ըզգաց ներսէն ,
 Որ փոխուեցաւ գոյն երեսին ,
 Լ՛յլայլու թիւն մ՛եկաւ սրբտին :

Բայց զի ունէր նա սիրտ բարի
 Ինքզինք բռնեց որ չայլայլի .
 “ Լաւ է , ըսաւ , իւր կերք զսպել ,
 Քան ուրիշին մեղքը քրննել :

Մեղապարտը դատել պատժել ,
 Ո՛վ ալ ըսես կըրնայ ընել ,
 Բայց դատաստան արդար դատել
 Լ՛ստուծոյ է միայն վայել ,” :

Բսաւ աս խօսքս , թողուց գրնաց ,
 Կարծես բրնաւ չէր շրփոթած .
 Օ ի ամնամուտ էր վաղուան օր ,
 Պաշտօնատեարք կ՛որոշուին նոր :

Կը պատրաստուին բոլոր զօրքեր ,
 Ճամբայ ելլել դառնալ տեղեր .
 Հարիւր հազար զօրաց մէջէն ,
 Յիսուն հոգի մեռած գրտնէն :

Թըշնամեաց զօրքն այնչափ շատ էր ,
 Որ մէկին դէմ հինգ մարդ կ'ելէր .

Թէ մարդկային ուժի մընար ,
 Մեր զօրքն ամեն գերի կ'իյնար :

Լ. Լ Տիրամօր Լստուածածնայ ,
 Նըրաչքն յայտնի հոն կ'երևնայ .

Սպիրիտիոն ծեծ չըսկըսած ,
 Իր սիրոյն էր ապաւինած :

Եւ յաղթելէն վերջն ալ իրաւ ,
 Իւր խոստմունքը առաջ տարաւ .

Լ. Ես անուենով ժամ մը շինեց ,
 Լգատարար սոչրք կոյս կոչեց :

Քանի մ'օրէն երբ նաւ մըտան ,
 Որ ալ իրենց տեղեր դառնան ,

Նասան քաղքէն գացող ծերեր ,
 Ներկայացան տըւին գըրեր :

Բոլոր քաղքով վըկայեցին ,
 Վասն իշխանաց թէ մեղք չունին .

Գենովափէն զամենքս խաբեց ,
 Մեռած անունդ նա տարածեց :

Սպիրիտիոն մեծ մեծ պատուով ,
 Լռաւ ծերերն նըստեցուց քովն .

Նանդարտութեամբ հարցուց լսեց ,
 “ Մեղքս է , ըսաւ , խօսքը գոցեց ” :

Է.


Յաջողութեամբ հասան նաւեր ,
 Բազմութեանը տեղ չիբաւեր .
 ()րով առաջ ամեն տեղաց ,
 Ըրբ և կանայք հոն են ժողված :
 Ընպէս խընտում հասարակաց
 Սօտ տարիներն չէր տեսնուած .
 Երբ նաւերէն ելան ցամաք ,
 Ի՛նչ խնտում էր ի՛նչ աղաղակ :
 Ըրբ և կանայք մանչ թէ աղջիկ ,
 Ը հասարակ մեծ ու պզտիկ ,
 Ուրախութեամբ կանչեն կեցցէ ,
 Սպիրիտիոն տէր մեր կեցցէ :
 Բայց նա մատը դըրած բերնին ,
 Ու կ'աղաչէր որ հանդարտին .
 Ը աջ մըտաւ եկեղեցին ,
 Տալ գոհութիւն յաղթող փրկչին :

Ելաւ ժամէն կուտայ ողջոյն ,
 Օրծաղերես ամեն մէկուն .
 Շընորհակալ եղաւ զօրքին ,
 Հրաման տուաւ որ գան ժողովին :
 Հոն ամենուն յատուկ ձեռօք ,
 Իրենց թոշակ տայր եւելօք .
 Վերջը կարգաւ կեցան դիմաց ,
 Շընորհակալ եղան սրբտանց :
 Տրաւ հրաման որ արձրկուին ,
 Երթան իրենց տեղերն հանգչին .
 Ուրախութեամբ ելեր կ'երթան ,
 Կ'եղանակեն երգ յաղթութեան :
 Եւ իմ սիրտըս արդեօք կ'ուլար ,
 Թէ մարդկանց հետ սուտ կը խնտար .
 Արովհետեւ լաւ հասկըցայ ,
 Ար ալ ինծի խընտում չիկայ :
 Զուգեց բընաւ նա զիս տեսնել
 Երեսն մէկդի կը դարձընէր .
 Հրաման տուաւ որ արգիլեն .
 Թէ որ ուզեմ երթալ իրեն :
 Գողոն իրաւ սիրտն ունի գող ,
 Օր լաւ գիտէ թէ ինքն է գող .
 Բայց զուր տեղը երբ զիս մատնեց ,
 Ընչուչտ իւր կամքն կ'ընեմ կարծեց :

Չեռաց տակէն խըրկեց մարդիկ ,
 Որոնք էին իրեն մօտիկ .
 Կը խոստանար զիս ազատել ,
 Թէ որ խօսք տամ իր կամքն ընել :
 Երբոր այս բանս կը լըսէի ,
 Ես ինքիրմէս դուրս կ'ելլէի .
 Եւ յնպէս սիրտըս կը զայրանար ,
 Որ զիս բռնել չէի կրնար :
 Թէ Եստուծոյ չըվախնայի ,
 Եկողները կը սպաննէի .
 Եւ յնչափ իրմէն զըզուած էի ,
 Եւ ունն լըսել կը գարշէի :
 Իրաւ մեղքէ փախչելու է ,
 Եւ յԵթ թշնամին ատել պէտք չէ .
 Ետելու թիւնս Կողոնի դէմ ,
 Օ իս խորխորատ ձրգեց գիտեմ :
 Բայց դու տես թէ վերջն ինչ եղաւ ,
 Ինչ չարիքներ առաջ չեկաւ .
 Իմ կործանմանս պատճառ ես եմ ,
 Թէ որ շիտակն ըսել ուզեմ :
 Ետքի բանը միտք չընողը
 Սըրտէն չելլեր ահն ու դողը .
 Ուրիշին փոս փորէ չափով ,
 Որ թէ իյնիս ելլես շուտով :

Ա ըրէ՛ ժխնդիր մ' ըլլար չարին ,
 Որ քեզ զրտայ վընաս կրկին .
 Եթէ գիտենք տէր կայ երկինք
 Պէտք է չարին չարիք խորհինք :
 Թէ աս բաներս նախ միտքս իյնար ,
 Եւ չարիքներ չէր առաջ գար .
 Գողոն ինքն ալ թէ և միշտ չար ,
 Իր ըրածէն ինք կ'ամրջնար :
 Ինչ ալ էր նէ զրտայ պատիժս ,
 Չիսըրբեցաւ մուրն երեսիս .
 Ա ըկայուեցան ամենքն արդար ,
 Օ իս վըճուեցին չարեաց պատճառ :
 Եւ այս վըճիւ իմ յանցանաց ,
 Կախ թէ շինծու գիր եմ հանած .
 Երկրորդ թէ ազգս ոտք հանեցի ,
 Ընհարազատ ստացայ որդի :
 Իրաւ աչքերս արիւն կուլայ ,
 Բայց սիրտըս չէր տակնուվրայ .
 Փըրկչիս կամաց զիս յանձնեցի
 Աիրտս ու հոգիս անոր տըւի :
 Եւ յս բաներով երբ շըւարած ,
 Մըտածէի գըլխէս անցած ,
 Տեսնեմ յանկարծ հասան վըրաս ,
 Կատղած մարդիկ աչքեր մըթնած :





Մարդկային գուժ չըկայ սրբուերն ,
 Լճուրներէն արիւն կաթեր ,
 Երբ կը կանչեն կը կանչուուտեն ,
 Մարդուս խելքը կ'առնեն գըլխէն :
 Միժէ մայրէ՛ր ծընան զասոնք ,
 Գայլերո՛ւ հետ սընան արդեօք .
 Երբ կը քաշեն կը քաշկըուտեն ,
 Սիրտըս մարի սաստիկ ցաւէն :
 Լաթերս բոլոր պատըուտեցին ,
 Գըլխուս մաղերն ալ փետտեցին .
 Ու ձեռուրներս ետին կապած ,
 Դուրս հանեցին գըլուխըս բաց :
 Ի՛նչ չեն ըսեր եւել պակաս ,
 Լ'ումեղ տըղան վիզս են կապած .
 Եւ թուքումուր և հայհոյանք ,
 Մինչև հասանք 'ի հրապարակ :
 Բաղաքն ամեն ժողովեցաւ ,
 Սո՛յ ահանջիս ինչէ՛ր լուաւ .
 Մեծամեծներ իշխաններէն
 Լմենք փախչին երես պահէն :
 Միայն Գողոն լիրբ և գոռող ,
 Եկաւ ձիով մօտեցաւ քովս .
 « Խօսք տուր ինձի քեզ ազատեմ ,
 Գէթ իմացիր թէ ես ո՛վ եմ , » :

Կորէն այս խօսքս երբ լռեսցի ,
 Մէկէն վերան կանչուրուտեսցի •
 “ Հազար անգամ կ'ընտրեմ մեռնիլ ,
 Քան թէ փրկչիս կամքէն անցնիլ :
 Թող խեղճ մարմինս հոս չարչարուի ,
 Որ մեղքերուս աղտ ջնջուի :
 Ըրդարութիւն մեզի կ'օգնէ
 Ի մարդկանէ երբ յոյս կըտրէ ,” :
 “ Ըրիւնդ , ըսաւ , ըլլայ գլխուդ ,
 Կու ես պատճառ կորսըւելուդ •
 Երբոր չուզես կամքս ընել ,
 Ես ալ դարչիմ ըզքեզ տեսնել ,” :
 Հանեց ծոցէն մահուանս վրձիւ ,
 Բազմութեան մէջ կարդաց այն գիր •
 Ընտրէնը դեռ կը կարծէր
 Թէ չեմ մերժեր ես իրեն սէր :
 Երբոր գիրը կը կարդային ,
 Մարդիկ ցաւօք վերաս նային •
 Ըյլ ինձ ազդում մ'եղաւ ներսէս ,
 Թէ կը յաղթես երբ համբերես :
 Եւս այնչափ սիրտս ուրախ եր ,
 Մխտքս բընաւ չէր շրփութեր ,
 Կը կարծէի թէ խաչս առեր ,
 Ելեր կ'երթամ Կողգոթայ լեռ :

Բայց զիս տանող անգուժ դահճաց ,

Տըւաւ Բստուած սիրտ ողորմած .

Երբոր հասան քաղաքին ծայր ,

Տըղան առին շալակէս վար :

Իրենց մէջը ծածուկ կ'ըսեն ,

« Ի՞նչ հասկըցաք դուք այն խօսքէն .

Ինչո՞ւ Վողոն կ'ըսէր խօսք տուր ,

Կարծեմ' աս խեղճ մատնեցաւ զուր :

Նա չերևնար թէ է արդար ,

Ինչո՞ւ համար սա խօսք չիտար .

Սիրտը շիտակ չէր այն մարդուն ,

Յայտնի ցըցուց զուր չարութիւն :

Կ'երևնայ թէ անպարտ փուճ տեղ ,

Պիտի մեռնի այս կին անմեղ .

Սպիրիտիոն , ափսոս խելքին ,

Պէտք չէր հաւտալ անօրինին : .

Ընայէս շատ հեղ խելօք մարդիկ ,

Բերեն իրենց մեծ նախատինք .

Քըսու մարդկանց երբ կը հաւտաս ,

Հարկաւ օր մը ծաղըր կ'ըլլաս :

Ի՞նչ անմեղներ զուր տեղ կ'այրին՝

Մեծն օր չըլլայ տէր իր խելքին .

Եւ ի՞նչ զարմանք թէ անօրէնք

Ընանկ տտեն յաղթանակէն , :

Ասոնց նրման ուրիշ բաներ ,
 Մէկն մէկալին հետ կը խօսէր ,
 Մինչև հասանք գետի մը քով ,
 Որ վազելով կը թափէր ծով :
 Հոն կանկ առինք քիչ մը կեցան ,
 Բերին գիրկըս տըւին տըղան .
 Այս է , կ'ըսեն , մեզ հըրամանք ,
 Որ ձեզ ջուրը ձրգենք դառնանք :
 Ան ատենը աչքերս լեցուած ,
 Հառաչեցի առ տէր Աստուած .
 « Տէր իմ , ըսի , ներէ մեղացս ,
 Եւ մի զըրկեր զիս 'ի փառաց » :
 Երբոր զըզջումս ըրի սըրտանց ,
 Կեցայ պատրաստ որդիս գըրկած ,
 Ինչպէս անգութ գայլին դիմաց
 Գառն ու ոչխար կան թալկացած :
 Գան դահիճ'ներն վըրաս նային ,
 Ու ցաւելով ետ դառնային .
 Կը միանան ջուրը ձրգել ,
 Կը դողզըղայ ձեռքերն ոտքեր :
 Բանի որ մեզ կը տեսնէին ,
 Այն խեղճութեան կը գըլթային .
 Ո՛վ է տեսեր այսպիսի բան ,
 Անգութ դահիճք բարձրաձայն լան :

Ա եր վար քալեն ճար չեն գրտներ ,
 Ս ուրը ճրգել չերթար ձեռքեր .

Մ րտածելու գացին մէկդի ,
 Որ խօսածնին մընայ գաղտնի :

Կը վախնային ալ իրարմէ

Մ էին զմէկալ ջըլայ մատնէ .

Խօսք մէկ ըրին ու երդուընցան

Չըլլայ մէկուն յայտնեն այս բան :

Ա երջը եկան ըզմեզ առին ,

Տարին դաշտ մը մօտ անտառին .

“ Մ եղք են , կ'ըսեն , թող չիմեռնին ,

Գոնէ գըթանք անմեղ տըղին ,” :

Մ էյմ' ալ տեսնեմ թողին փախան ,

Ո'րն հոս որն հոն եղան ցիր ցան .

Չըլլայ կ'ըսեն ճամբան սորվի ,

Ետեներնէս գայ ու հասնի :

Ը յլ իմ աչքերն արցունք լեցուած ,

Հազիւ տեսնեմ դէմըս եղած .

Ի'նչպէս ճանչնամ եղած ճամբաս ,

Ու ետ դառնամ չիմուորած :



Ը.

Մարդուս գրչեսն ինչեր ջանցնիր ,
 Սիշտք , նեղութիւնք չեն պակասիր .
 Լ.ՂԼ Թէ ըլլայ համբերող ժիր ,
 Գրծուարութեանց յաղթէ իժիր :
 Լ.ՂԵ դաշտին մէջ որդիս գրրկած ,
 Չորս դիս նայիմ յուսահատած .
 Ո՛հ , ես ինքզինքս կորուսեր եմ ,
 Կամ Թէ ո՛ւր եմ բընաւ ճիտեմ :
 Լ.տենն անցաւ , վերջը կարծես
 Քունէն զարթած դառան մը պէս ,
 Որ Թրփերուն տակը պառկած
 Չէ իմացեր հովուին գացած ,
 Ար դարձրնէ աչքերն չորս դին ,
 Լ.ՂԼ ճիւղսեր ձայն երամին .
 Յոգնած վազէ ասդին անդին ,
 Լ.ՂԼ անօգուտ է ջանք խեղճին .

Մէյմը լեռը կ'ելլէ լալով,
 Նորէն կ'իջնայ դաշտ մայելով.
 Արկնէն ժայռեր իւր մային ձայն,
 Նա երամին կը կարծէ ձայն :


Լ. յապէս և ես բացի աչքերս,
 Չիյտեմ բընաւ ես ինքիրենս.
 Երբոր խելքըս գըլուխս եկաւ,
 Մըտածէի ինձ ինչ եղաւ :

Լ. քերս հոս հոն կը դարձընեմ,
 Յուսալով թէ մարդ մը տեսնեմ.
 Մէյմը ասդին մէյմը անդին
 կը պըտըտիմ չորս դին դաշտին :

Տեսնեմ չիկայ ոչ մարդ ոչ ձայն,
 Ա՛հ, մընացի անօգնական,
 Խելքըս գըլխէս անմըմեցաւ.
 Ար՞ճն պատմեմ ես սըրտիս ցաւ :

Մէկ ձայնս երկինք մէկ ձայնս գետին
 Օ ուր կանչուըռտեմ կողկողագին.
 Ի եռներ ձորեր խօսին կանչէս,
 Ես կը խաբուիմ ինքիր ձայնէս :

Տըղաս գըրկէս վար ձըգեր եմ,
 Չիյտեմ ո՛ւր եմ ո՛ւր կը քալեմ.
 Մէյմ'ալ երբոր ձայնն լըսեցի
 Արդեկորոյս դարձայ հաւի :



Ինչպէս վազածս ես չիգիտցայ ,
 Ուրիշ ցաւերս ամեն մոռցայ .
 Մայրական գուժս այնպէս յորդեց
 Որ վախ սարսափ սրբտէս մերժեց :
 Հասայ գիրկըս առի տրդան ,
 Խանդաղատի սիրտըս վըրան .
 Սէր գըժուժիւն երբ միանան ,
 Մայրերն ինչպէս կը դիմանան :
 Մօտ էր արևն մայր մտնելու ,
 Չայն կը լըսեմ թըռչուններու ,
 Որ խըմբովին բոյներ կ'երթան ,
 Չըլլայ մընան մուժ գիշերուան :
 Ա երուցի աչքս տեսայ կ'անցնին ,
 Թըռաւ իմ սիրտս ալ հետերնին ,
 Լճքերս անթարթ դիտէր ճամբան ,
 « Ուր են , կ'ըսեմ , ձեր իջլան :
 Այ ինձ հապա ես ուր երթամ ,
 Ուր տեղ ինձի հանգիստ գըտնամ .
 Սուր չեմ վազեմ ես ծովն իջնամ ,
 Հանգստութեանս վրայ խընտամ :
 Չագ չեմ , թըռչիմ տեղըս հասնիմ ,
 Բնկերներով մըխիթարուիմ .
 Ո՛վ արեգակ դու ուր կ'երթաս :
 Օ իս մուժին ձեռք ինչպէս թող տաս :

Լ.յս վերջին գուժ ցրցուր վրաս ,
 Տեղ մը մտնեմ մուժը չեկած .
 Թող գերեզման ըլլայ մարմնոյս ,
 Մեռնելէս վերջ չիմընամ դուրս ,” :

Լսոնց նման ուրիշ խօսքեր
 Չըրոյ նման բերնէս վազեր .
 Մէյմ’ալ ինքքս ինծի եկայ ,
 Եւ մեղանչելս մէկէն գիտցայ :

“ Ինչո՞ւ , կ’ըսեմ , յիմարեցայ ,
 Ինչո՞ւ տըւած խօսքէս դարձայ .
 Երբ Լստուծոյ եմ զիս յանձնած
 Սիրով պէտք է տանիլ վըշտաց ,” :

Եւ այս վերջի ըսած խօսքէս ,
 Այժ մը հասաւ սիրտըս ներսէս .
 Օրնկան վըրայ ելայ կեցայ ,
 Օիս յանձնեցի Լստուածածնայ :

Հարաւային կողմը դաշտին ,
 Տեսնեմ հեռու չէր անտառին .
 Կարծես ձագեր իրենց բունէն ,
 Լնոյշ ձայնով զիս հոն կանչեն :

Միտքս ձայներէն այնպէս մայլեր ,
 Կարծես նոքա են իմ ընկեր .

Լ.յսպէս քաղցր է ընկերուժիւն ,
 Եւ յիրաւի միշտ վայ միոյն :

Թէ և ըլլայ անբան թրուռն ,
 Այժ է սրբոտի մինակ մարդուն .
 Չիկայ անանկ դրժուարին բան ,
 Բայց երբ մընաս անօգնական :
 Քանի մուծը դեռ չէ կոխած ,
 Ի՞նչ կեցեր եմ դաշտին մէջ բաց :
 Երթամ ըսի ծառի մը տակ ,
 Արջափ ըլլայ անտառն է փակ :
 Ազգվազելով եկայ հասայ՝
 Գալուս վրայ շատ զրոջացայ ,
 Կատղած դայլեր առին չորս դիս ,
 Ախտէս լեզուս կրպաւ քիմքիս :
 Ի՞հուզողով ետ քաշուեցայ ,
 Բայց փախչելու հընարք չիկայ .
 Օ՛ուր կը կանչեմ կը կանչուրուտեմ ,
 Չայնովս հաւ չեն որ վախցընեմ :
 Ետիս առջևս բոլորուեցան ,
 Հաչեն կ'ոռնան ամենք մէկ ձայն .
 Ի՛կուաներնին երբ կրճրտեն ,
 Ախտէս խելքըս գըլխէս կ'առնեն :
 Ա՛իժէ քարէ՞ ունիմ ես սիրտ ,
 Պատեցին զիս նեղութիւն վիշտ .
 Ահա հուան երկունք հասան առ իս ,
 Աստիկ տանջէ չառնուր հոգիս :

Ա՛ր մէկ ցաւի դիմանայ սիրտս ,
 Մ ութը արդէն սարսափեց զիս .
 Օարաւ քաղցած , ջրկայ ջուր հաց ,
 Եւ ունեցած ոյժս ալ գընաց :
 Լ յԼ զամեն ցաւ դարձեալ մոռնամ ,
 Երբոր զաւկիս լաց կը տեսնամ .
 Ա յայ ինծի պէս մայր եղողին ,
 Լ յսպէս զաւակ մեծցրնողին :
 Ա յիս ու կըսկիծս խառնըւեցաւ ,
 Տակնուվըրայ սիրտըս եղաւ .
 “ Ա ըտացելոց յոյս , Տիրամայր ,
 Խընդրեմ հասիր մի ուշանար :
 Ա՛վ Լ ստուած իմ , գըթա խեղճիս
 Լ սոնք քիչ են մեղքիս պատիժ .
 Միայն խնդրեմ ոյժ տուր հոգւոյս ,
 Ար ջընկըղմիմ թողեալ անյոյս :
 Մի՛ դու Տէր իմ , Տէր բարերար ,
 Մի՛ իմ ուժէս վեր պատիժ տար .
 Արդւոյս լացին չեմ դիմանար ,
 Ա՛հ , քարերն ալ թող ջըլլան մայր :
 Գիտեմ Տէր իմ , եմ մեղաւոր ,
 Լ յԼ աս մեղքիս չեմ պարտաւոր .
 Տուր ինձ բառնալ խաչըդ սիրով ,
 Բարեխառնէ սըրտիս գորով :

Եկեց եւել պատիժ ջրլար

Մէկ մեղաւոր մօր մը համար ,

Երբոր զաւակն աչքին առջին ,

Քաշէ զպատիժ մօրը մեղքին :

Գիտեմ վասն իմ ըզսա պատժես

Որ աւելի սիրարս տաղես .

Ո՛վ Աստուած իմ, ինչ դէմ կենամ

Երբոր մեղքերս լաւ կը ճանչնամ :

Ի՞նչպէս ըսեմ վերցուր խաչըդ ,

Հակառակիմ քօ կամացըդ .

Ե՛ւլ երբ կ'ըսեմ գրթա՛ զաւկիս ,

Նոյն է ըսել վերցուր պատիժս :

Երբ մեղաւոր կը ճանչնամ զիս ,

Պէտք է սիրող ըլլամ խաչիս .

Ուստի չիկայ ուրիշ ճամբայ ,

Քու սուրբ կամքդ օրհնեալ ըլլայ :

Չարչարէ զիս ինչպէս կամիս ,

Մի՛ զիս թողուր ինքիր կամքիս .

Նըւիրեմ քեզ զիս ու որդիս ,

Ինչունէ զոհն անարժանիս ,” :


Ե՛ս որ ըսի ոտքի ելայ ,

Փայլատակած լոյս մը տեսայ .

Գայլերն լուսէն եղան ցիր ցան ,

Մէյմ՝ ալ չեկան չիմօտեցան :





Եւ իմ միտքըս ապշած մընաց ,
 Երբ որ քովըս տեսայ կայնած
 Մէկ եղնիկ մը ձագուփս հանդերձ ,
 Չուզէր բընաւ թողուլ ըզմեզ .

Օ ի կենդանիս այս վայրենի ,
 Միշտ մարդկանցմէ հեռու փախչի ,
 Երբ մանաւանդ ունենայ ձագ ,
 Ար ծածկըւի ժայռերու տակ :

Իսկ այս որպէս ընտանի կով ,
 Ա՛ռզէ որ միշտ կենայ մեր քով .
 Եւ երբ որդւոյս լացը տեսնայ ,
 Ար պառկի որ իրեն կաթ տայ :

Արչափ որ մենք կեցանք ան տեղ ,
 Կեցաւ նա ալ մեր հետ մէկտեղ .
 Թէ և երթար արծրւելու ,
 Դառնար առանց ուշանալու :

Ընտառին մէջ երբ քալէի ,
 Տեսայ պրտղի ծառեր վայրի .
 Թէ և չըլլան այնչափ յարգի ,
 Ինձ շատ էին փոխան հացի :

Մէկ քարայր մ՛ալ գըտայ մօտ տեղ ,
 Մեզ պառկելու չէր այնչափ նեղ .
 Արուն քովէն կ'ելլէր աղբիւր ,
 Եւ քաղցրահամ ունէր նա ջուր :

Ըստնք ամենն ինձ երկրնքէն ,
 Մեծ պարգևներ ես կը սեպեմ .
 Օ ի որ յուսայ 'ի տէր Ըստուած ,
 Հընար չէ որ մընայ քաղցած :
 Իրաւ սիրտըս մեծ ցաւ կը զգար ,
 Եղած բաներ երբ միտքըս զար .
 Ը՛յլ խնտումը ցաւիս յաղթէր ,
 Երբ յիշէի երկնից փառքեր :
 Ըզատեցայ սուտ աշխարհէս ,
 Գանգատ չունիմ ալ ցաւերէս .
 Թող խեղճ մարմինս հոս տանջուի ,
 Որ հոն անմահ հոգիս հանգչի :
 Ինչպէս օրհնեմ ըզքեզ Յիսուս ,
 Դու իմ առջին և վերջին յոյս .
 Ը՛յս պարգևիդ եմ անարժան ,
 Ձրի շնորհովդ ըրիր արժան :
 Բազոր սիրովդ վառեցիր զիս
 Մոռցուցիր ինձ սէր աշխարհիս .
 Թէ և մարմինս այրէ հուր բոց ,
 Ընմահ հոգիս մընայ անխոց :
 Բազդիս անիւ դարձաւ յանկարծ ,
 Գըլորեց զիս ճրգեց բարձանց .
 Ետաատինք եմ ամեն մարդկանց ,
 Ես քու սիրովդ եմ ըզմայլած :

Երբ երբ ճանցցայ իմ հողուոյս յարդ ,
 Փակած էր աչքս աշխարհիս փառք .
 Բարբոքեցիր սիրոյդ կրրակ ,
 Արչափ սիրեմ՝ միշտ եմ անյադ :
 Ահր աշխարհիս ցեց ոսկերաց ,
 Արչափ սիրեմ միշտ վերջն է լաց .
 Ահր Յիսուսիս անըսպառ կեանք ,
 Ա փաճան սիրոյս քեզ և ինձ փառք :
 Ահր մարդկային սէր խաբեբայ ,
 Չէ չէ բընաւ սէր աներկբայ .
 Իսկ Յիսուսիդ սէր անարատ՝
 Ահր անփոփոխ և միշտ հաստատ :
 Ահրոյն ազնիւ արդեօք ի՞նչ կայ ,
 Ըմեն բարեաց աղբիւր է նա .
 Ըյլ և չարեաց կ'ըլլայ պատճառ ,
 Եթէ սիրոյն վախճանն է չար :
 Օ ի և սիրոյն կայ չափ սահման ,
 Չափն է ունել բարի վախճան ,
 Սահմանն՝ սիրել վասն Բստուծոյ ,
 Եւ չիսիրուիլ առանց փորձոյ :
 Մարդիկ ոչ միշտ սիրեն ճրրի ,
 Շատ հեղ շխտակն տանին ծուռի .
 Ար դարձրնեն չարի բարին ,
 Եւ ցանկութեան հըրով կայրին :

Դու Մատուած իմ զիս փրկեցիր ,
 Տըրով շնորհացդ զայն շիջուցիր .
 Չէի արժանս աս պարգևիդ ,
 Երնորհ ունիմ փրկող ձեռինդ :
 Օ ի կրկնակի սէր ցըցուցիր ,
 Օ իս 'ի վըշտաց ազատեցիր .
 Հոս չունիմ վախ ոչ Վողոնէն ,
 Աչ անիրաւ բամբասանքէն :
 Ինչր գոհութիւն քեզ տէր Յիսուս ,
 Դու մըխիթար հոգւոյս մարմնոյս .
 Դու պահեցիր զիս 'ի մեղաց
 Լքատելով 'ի փորձանաց :
 Թէ չիհասնէր քոյ դթութիւնդ ,
 Ա'ընկըղմէի 'ի խոր անդունդ .
 Լ՝յլ զօրութեամբ յաղթող բազկիդ ,
 Տըւիր ինձ զայս նաւահանգիստ :
 Լ՝յսուհետեւ չունիմ գանգատ ,
 Լ՝լ չեմ սեպեր ես զիս անբաղդ .
 Թէ մընացի ես հոս մինակ
 Իբր անընկեր ու խեղճ տատրակ :
 Ա՛հ թէ որչափ քաղցր է ինձի ,
 Լ՝ռանձնական կեանք ցանկալի .
 Օ ի ցորչափ կեամ ես միայնակ ,
 Լ՝յնչափ ճանչնամ իմ հոգւոյս յարդ :

Լ. յս ցանկալի միայնութիւն

Ինձ միշտ հաճոյ էր և սիրուն .

Չէի ուզէր աշխարհք մտնալ ,

Փրկչիդ սիրոյն հեռի ըլլալ :

Լ. յԼ զի գաղտնիք քոց խորհրդոց

Իրաւցրնէ խորք են խորոց ,

Իմ մանկութեան սէրս մերժեցիր ,

Հիմայ քու սէրդ արծարծեցիր .

Մէկ ատեն մ'ալ զաւկի համար ,

Միշտ կուլայի ես անդադար .

Երդ գըթացիր՝ չեմ անպրտուղ ,

Չորցած ծառէն ելաւ ընծիւղ :

Թէ և մարմնով աստ մենք տանջիմք ,

Լ. յԼ ըստ հոգւոյ եմք երջանիկք .

Օ ի ճշմարիտ երջանկութիւն՝

Խրղձմրտանաց հանգստութիւն :

Մարդուս հոգին մարդով շահուի ,

Բայց շատ հեղ ալ կը կորսուի ,

Ուստի լաւ է ապրիլ մինակ

Քան թէ մատնիլ դրժոխքին բանտ :

Հապա Տէր իմ Տէր բարեգութ ,

Լ' ու ընդունէ զայս իմ նոր ուխտ .

Օ ի որչափ և տաս դու ինձ կեանք ,

Բառնամ զիմ խաչ լըջմտութեամբ , :

Տարին սահէր չիտեմ ինչպէս,
 ()րերն անցնին ջրերու պէս .
 Յաւ տրտմութիւն չիտեսայ ես,
 Լըցունք չելաւ բընաւ աչքէս :
 Լն ինչ խնտում եղաւ սրբտիս
 Երբոր տեսայ խօսի որդիս .
 Կակազելով քաղցրը խօսքեր,
 Կը բըժըշկէր սրբտիս վերքեր :
 Վ եց տարեկան երբոր եղաւ
 Իւր կատարեալ չափը գըտաւ .
 Գեղեցկութիւն պայծառ դէմքին՝
 Կարծես լոյս տայր մութ անտառին .
 Եղնիկն առջի օրէն՝ ի վեր
 Լմենեին մեզ չէր մոռցեր .
 Բայց նա իրեք օրը շաբթուն,
 Եւմ կը պահէր մինչ իրիկուն :
 Եսոր նըման ուրիշ բաներ
 Իրեն համար կարգ էր դրեր .
 Ուրբաթ դիշեր մինչ առաւօտ,
 Երնկան վրայ կ'ընէր աղօթք :
 Ետ հեղ քովէս կ'ելլեր կ'երթար,
 Ինքն ինքիրեն կ'առանձնանար .
 Փընտրուելու կ'ելլեմ ուր է,
 Տեսնեմ չոքեր աղօթք կ'ընէ :

Գետնի վրայ գիր գրրեցի ,
 Գրրել կարդալ սորվեցուցի .
 Ըյնուհետև քալած ատեն ,
 Գրրէր կարդար ինքը իրեն :
 Յիշողութիւնն էր այնչափ բաց
 Որ մէկէն մէկ սորվէր լըսած .
 Իմ պատմածներս մըտքէս կ'ելլէր .
 Ինքը նորէն միտքըս ձրգէր :
 Սուրբ գիրքն եղած պատմութիւններ ,
 Բոլոր միտքը պահած գիտէր .
 Նըմանապէս սըրբոց վարքեր
 Իրենց տօնին օրեր պատմէր :
 Ընչափ տարի կեցանք մինակ ,
 Ըյլ մեզ բընաւ չէր այն տանջանք .
 Սանաւանդ թէ եմք յոյժ ուրախ ,
 Ընտառն եղաւ մեզի դըրախտ :
 Իրաւ մարդուս է բընական
 Սիրել ըզկեանս ընկերական ,
 Սակայն 'ի սպառ կը դառնանայ՝
 Ընկեղծութիւնն երբոր վերնայ :



Թ .

Եթէր տարի այն տեղ կեցանք ,
 Փառք Լստուծոյ , մարդ չիտեսանք .
 Բայց միշտ որդիս կը փափաքէր
 Թէ ճար ըլլար մարդ մը տեսնէր :
 Տեսնեմ որ մը առաւօտանց
 Եղնիկներովն ելաւ գընաց .
 Շատ չէր անցած վազէց եկաւ ,
 Լալով գըրկիս վըրայ ինկաւ :
 Շունչը կըտրած երբ դողդըղար՝
 Կարծես սիրտը տեղէն կ'երթար .
 Գըրկիս մէջը կը պահուրտի ,
 Լեղապատառ ետին նայի :
 Ես ալ դարձայ նայիմ ինչ կայ ,
 Տեսայ եղնիկն վազէ կուգայ .
 Եւ կարծելով թէ եղնիկէն
 Տըղան այնպէս կուլայ վախէն ,

Որդեակ , ըսի , ինչո՞ւ վախցար ,
 Քեզ եղնիկէն ինչ վընաս կար .
 Կըտրիճ եղեր ել ոտք կայնէ ,
 Սիրտըդ ուրախ զըւարթ բըռնէ ,” :

Վախըս , կ’ըսէ , եղնիկէն չէ .
 Խեղճ’ն ո՞վ գիտէ ինչ կը քաշէ .
 Լ’նշուշտ ինկաւ թշնամւոյն ձեռք .
 Որ թէ մեռնի՝ ինձ կ’ըլլայ վերք ,” :

Ինչո՞ւ մեռնի ահա հոս է ,
 Չագը հետը կը վազվըզէ .
 Դու փուճ տեղը սիրտդ դող հանես .
 Դարձիր նայէ , ինչէ՞ն վախես ,” :

Ո՛հ մայր , ըսաւ , ինչ կը զրուցես ,
 Ինչ վախ քաշելս միթէ գիտես .
 Լ’յնպէս զարմանք բան մը տեսայ
 Որ ինչ եղածս ես չիգիտցայ :

Եղնիկ ըսեմ՝ չէր նըմաներ ,
 Մարդու նըման ձեռքեր ունէր .
 Փայլուն բան մը ձեռքն էր բըռնած ,
 Չորս ոտքերու վըրայ կայնած :

Երկու գըլուխ տեսայ վըրան ,
 Լ’չուրներէն բոցեր կ’ելլան .
 Տեսքն ահաւոր միտքս որ կ’իյնի ,
 Մարմինս վըրաս փըշաքաղի :

Եղնիկն ինձմէ առաջ տեսաւ ,
 Մէկէն թողուց քովէս փախաւ .
 Բայց նա այնպէս վազեց կատղած
 Որ անտառը ձայնէն թընդաց , :

Տըղան խօսքը չէր լըմընցած ,
 Ես ալ ձայն մը առի մօտանց .
 Դարձայ ետիս տեսնեմ ինչ է ,
 Փախչիմ ըսեմ կարելի չէ :

Չիաւոր մը զինուորական ,
 Ելեր կուգար զէնքեր վըրան .
 Ես ալ վախցայ չափէն եւել ,
 Սըրտէս կարծես արիւն կ'անցնէր :

Բայց մայրական գուժը յորդեց
 Բողորովին վախը մերժեց .
 Օ ի կանանց վախն է բընական ,
 Ը՛յլ յաղթող է սէր մայրական :

Ը՛յնպէս ինձի կուգար ներսէս
 Թէ առիւծ մը դարձեր եմ ես .
 Կարծես կըրակ կայ սըրտիս մէջ ,
 Իր ծուխն և մուխ կ'ելլէ բերնէս :

Տըղան գիրկըս առի կեցայ ,
 Յանձնեցի զիս Ըստուածածնայ .
 “ Արդի , կ'ըսեմ , ինչո՞ւ վախցար ,
 Մ'արդ տեսնելու դու չե՞ս բաղձար :

Չի ու վրայ հեծած է նա ,
 Դու մի վախնար , բան մը չիկայ •
 Երբոր մարդիկ ձի կը հեծնան՝
 Լսապէս ահեղ միշտ կ'երևնան , :
 Ես խօսքերըս ըսած ատենս ,
 Լնթիւ բաներ կ'անցնէր մըտքէս •
 Կ'ուզեմ խելքովս սիրտ տալ տղուն ,
 Բայց իմ ներսէս կ'երթար արիւն :
 Չուզեմ կենալ մարդուն դիմաց ,
 Ա ըրաս գլուխս է պատրուտած •
 Աստի թողի մէկդի փախայ ,
 Թուփի մ'ետե պահուրտեցայ :
 Լմօթն այնպէս շրփոթեց զիս
 Որ կ'ամաչեմ նայիլ չորս դիս •
 Լ՛հ , կ'ըսէի , բացուեր գետին ,
 Կուլ տար մէկէն զիս աս կիտին :
 Լսնապէս տազնապ չեմ տեսած ես ,
 Մահուան քրրտինք վազէր մարմնէս •
 Մարդն ալ տեսնեմ իջաւ ձիէն ,
 « Ինչո՞ւ , կ'ըսէր , փախչիս ինծմէն , » :
 « Խնդրեմ , ըսի , հեռու կեցիր ,
 Սիրտըս բոլոր դող հանեցիր •
 Ասկից արդեօք դու հոս եկար՝
 Տըղաս եղաւ լեղապատառ , » :

Կը զարմանայ մարդը վերաս ,

“ Ինչո՞ւ , ըսաւ , ինձմէ վախնաս .

Չեզի ինձմէ չիկայ վրնաս ,

Իսէ ինձի ինչ կամենաս :

Երկու հոգի ինչպէս կըրցաք ,

Ե՛յսպէս գէշ տեղ կենալ մինակ .

Չեզմէ ուրիշ ունիք ընկեր ,

Ինչ պատճառաւ հոս էք եկեր ,” :

“ Պարոն , ըսի , չունինք ընկեր ,

Ե՛ստուած միայն է մեզի տէր .

Շատ տարի է որ հոս եկանք

Ինքը պահեց մեզ անվրտանգ ,” :

Կրկին հարցուց . “ Ո՛ւր էր ձեր տեղ ,

Ե՛շխարհ բոլոր ձեզի՞ էր նեղ .

Ինձ կ'երևնայ թէ էք անմեղ ,

Չէք փափաքիր երթալ ձեր գեղ ,” :

“ Ե՛յս էր , ըսի , Ե՛ստուծոյ կամք

Որ մարդկանցմէ հեռու ըլլանք .

Իաւ է ունել հոս թշուառ կեանք ,

Քան զըթոխոց էյնիլ յատակ ,” :

Տեսաւ մարդը որ ետ քաշուիմ

Սերկ եղածիս համար մաշիմ ,

Ետ քաշուեցաւ անդին գրնաց ,

Խօսէր աչքերն իրեն ժողված :

Բայց մընացի ես զարմացած
 Երբոր որդիս տեսայ յանկարծ՝
 Գընաց մարդուն գիրկը նըստաւ,
 Արդէն ընկաւ արլուեցաւ :

Արչափ անգութ մարդ ալ ըլլայ
 Կարելի չէ լացը չիգայ .
 Լ'նտառի մէջ մեծցած տըղայ,
 ()տար մարդու այնչափ սէր տայ :

Մարդն որ ըսես ապուշ մընաց,
 Խելքը կարծես գըլխէն գընաց .
 Բան չիմանար կը զարմանայ,
 « Լ'նշուշտ կ'ըսէ հոս բան մը կայ :

Միթէ նոր եմ տըղայ տեսեր,
 Չեմ ես այնչափ տըղայասեր .
 Բորբոքեցաւ արդ սըրտիս սէր
 Կարելի չէ ալ զիս բըռնել :

Ըրդեօք երանգ ես կը տեսնեմ,
 Լ'յլ քուն չեղածս յայտնի գիտեմ .
 Ա՛յլ Լ'ստուած իմ, արդեօք ո՛ւր եմ,
 Լ'յսպիսի սէր ես տեսած չեմ ,» :

Իսկ տըղուն սէր՝ սըրտին գորով
 Կարելի չէ պատմել բերնով .
 Տարածելով փափուկ թւեր,
 Մարդուն վիզը կը փաթ թըւեր :

Հառաչելով մարդը կանչեց ,
 “ Մերըդ իմ սիրտս յափրշտակեց ,” .
 Գողգորդաւով գրրկեց պագաւ ,
 Մէյմ’ալ գրրկէն վար չիղրրաւ :
 Մարդը դարձաւ ինծի կ’ըսէ ,
 “ Ըղաչանքիս խընդրեմ լըսէ .
 Պէտք չէ բընաւ քաշուիս ինձմէ ,
 Ըս տեղերըս գիտե՞ս իմն է :
 Ինչ որ ուզէք կուտամ ձեզի
 Միայն ո՞վ էք ըսէք ինծի .
 Մարդ կարող չէ նեղել ըզձեզ ,
 Եւ կամ բըռնի հանել ձեռքէս .
 Ո՞վ հոս ըզձեզ բերաւ ձրգեց ,
 Կամ գեղերնէդ ո՞վ հալածեց .
 Ես կարող եմ զիրենք պատժել
 Եւ տուներնիդ ձեզ դարձընել :
 Ըհա զ՛ստուած վըկայ կոչեմ
 Որ ձեր կեանքը միշտ պաշտպանեմ .
 Կիտնամ աշխարհք է ձեզի դէմ ,
 Ըմեն ուժովս դառնամ ընդդէմ ,” :
 Տեսայ մարդը խիստ կ’այլայլէր
 Ըս խօսքերը երբոր կ’ըսէր ,
 Ա յիցայ ընդդէմ բան մը չըսեմ
 Երէն գըլխուս փորձանք բերեմ :

“ Տէր իմ, ըսի, զիս մի փորձեր,
 Լ՛յդպէս բաներ ես չեմ գիտեր.
 Սարդու հետ ալ կենալ չուզեմ,
 Լ՛յն պատճառաւ հոս եկեր եմ:
 Թէ որ երկինք տէր կայ գիտես,
 Սէր եղած տեղ թող տուր ըզմեզ.
 Դու քու գործիդ անցիր գընա՛,
 Բայց կ՛աղաչեմ մարդ չիմանայ:
 Սէնք աղօթող կ՛ըլլանք քեզի
 Որչափ Լ՛ստուած կեանք տայ մեզի.
 Զըլլայ մէյմ՛ալ գաս դու աս տեղ,
 Ասան զի մենք կերթանք մեր գեղ”:
 Տեսնեմ մարդը խօսքը փոխեց,
 “ Սիթէ տրղայ դու զիս կարծես.
 Ինչո՞ւ սերըս կ՛արհամարհես,
 Ս՛վ եղածըդ պէտք է ըսես:
 Գիտցիր Լ՛ստուած զիս հոս խըրկեց՝
 Պէտք է ինձմէ դու բան ծածկես.
 Ես եղնիկը զարնել եկայ
 Բայց ձեր գըթով զարնըւեցայ:
 Լ՛ստուծոյ դէմ կը մեղանչես
 Ս՛վ եղածըդ թէ որ չըսես.
 Երբոր իմ աս հողիս մէջն ես,
 Գիտցիր ինձի հըպատակ ես”:

Երբոր մարդը կ'ըսէր աս խօսք
 'Նորոգէին սրբտիս հին խոցք .
 Չէյտեմ ինչո՞ւ աչքերս մըթնէր
 Կը ծալլուէր ծունկիս բարձեր :
 " Խնդրեմ, ըսի, ներէ տէր իմ,
 Հրրաման տուր քիչ մը նրատիմ .
 Չեմ գիմանար սրբտիս գողին,
 Մարմնոյս ջրղեր կը ճրղճրղին :
 Պէտք է իրաւ քեզի պատմեմ
 Ըմենեին բան չիպահեմ .
 Բայց վախնամ թէ մեծ ցաւ կը զգաք,
 Մ'վ եղածըս եթէ գիտնաք ,, :
 Ըյնպէս բերնիս եկաւ ըսի,
 Բայց զարմանամ ինքըս ինծի .
 Չեմ ալ գիտեր ինչ կը զուրցեմ,
 Քար կը զարնեմ, բայց որո՞նն դէմ :
 Կարծես սիրտըս քար է կըտրեր,
 Ու լալ կ'ուզեմ՝ արցունք չելլեր :
 Ներս դիս կըրակ ընկաւ կ'այրի
 Ո՛հ, չեմ գիտեր ինչո՞վ մարի :
 Մէյմ՝ ալ յանկարծ պոռթկաց բերնէս
 Մէկ հրրաբուխ լերան մը պէս՝
 Ըյնչափ տարուան հրնցած ցաւեր,
 Արոնք սրբտիս մէջ դիզուած էր :

Ա՛ռ զեմ լեզուս բռնել չըսել

Բայց չեմ կըրնար ես զիս զըսպել .

Ա երջապէս կիրքս յաղթեց կամքիս

Բսի ինչ որ եկաւ բերնիս :

Վ ըսէ՛, տէր իմ, ոչ թէ ինձի՛

Ճըշմարտութեան որ կը խօսի .

Գե՛նուլափէ է իմ անուն ,

Օ իս կը տանջէ բաղդիս անուն :

Աեանքիս մէջը չիտընտացի ,

Նընողացմէ որք մնացի .

Ե՛յս սուտ աշխարհ միշտ զիս ատեց ,

Անն զի կամքս նախ զինքն ատեց ,

Ոչ աշխարհքէս ես համ առի ,

Եւ ոչ իրեն սէրըս տըւի .

Միշտ եղաւ նա ինձ թըշնամի ,

Իմ սիրտս ալ միշտ իրմէն գանի :

Փետուլ միայն խընտացի ես ,

Նա ալ վերջը խեցաւ բաղդէս .

Սպիրիտիոն էր իւր անուն

Եւ սիրելի ամեն մէկուն :

Իրեն նըման խոհեմ արդար

Աըրնամ ըսել մարդ մը չիկար ,

Բայց սխալմունքն աս բանիս մէջ

Իրեն ամեն բարիք ծածկեց :

Յանկարծ այնպէս գէշ խաբուեցաւ

Որ իւր խաբուիլն ալ չիմացաւ .

Իր սրբտին մէջ ըզգաց մեծ ցաւ ,

Եւ անօգուտ չըզգաստացաւ :

Մարդուս ամօթ չէ սրխալիլ ,

Կենաց ճամբուն մէջը գըթիլ .

Եւ մեծ ամօթ չզգաստանալ՝

Եւ զգեցուծեանց հոգւոյն չանսալ :

Մէկն որ խելքով լաւ փընտրուէ

Գէշն աղէկէն շուտով կ'ընտրէ .

Որ շամարտուծ իւնն չիծածկըւիր ,

Բաւական է դու մի ծըռիր :

Փեսայս ունէր մէկ ծառայ մը ,

Գողոն կ'ըսուէր իւր անունը .

Չունէր սիրտը Եստուծմէ ահ ,

Մարդէ ամօթն համարէր խաղ :

Բանի անգամ որ զիս տեսնէր

Իւր չար աչքերն միշտ վըրաս էր ,

Կ'ամաչէի էրկանս յայտնել

Սրբտին մէջը կասկած ձըգել :

Եւ յնչափ լիրբ էր անըզգամը ,

Որ չէր քաշուէր յայտնել կամքը .

Բայց միշտ ծածկէր զիւր չարուծիւն

Յուցընելով անկեղծուծիւն :

Լ՛յն պատճառաւ կարծէր շատ մարդ
Թէ Գողոն է այր անարատ .

Եւ իբրև հայր հասարակաց

կը պատուէին զինքն անկասկած :

Լ՛ս բանս շատ հեղ կը պատահի ,

Եւ շատ վընաս անկից ծագի .

Մի հաւատար տունդ օտարի ,

Եւ մի պատճառ լինիր չարի :

Թէ որ փեսայս խելօք ըլլար ,

Լ՛ս փորձանքներ գըլխուս չէր գար .

Գողոնի պէս չար ծառային

Պէտք չէր հաւտալ ամեն խօսքին :

Երբ գընաց նա պատերազմի ,

Դըրսէն կարծէր իւր թըշնամին ,

Չիյտէր խեղճը որ ընտանի՝

Տան մէջ իմ հետս պատերազմի :

Լ՛ռանց ինծի հարցընելու

Դըրաւ տանը վերակացու ,

Նա ալ ինքիր խելքին հաւնած ,

Ինչ որ ուզեց գըլխուս խօսղաց :

Իւր չար կամքին երբ դէմ կեցայ

Գըլխուս ամեն գալիք գիտցայ .

Օ՛ր գութ բընաւ չիկար սիրտը ,

Լ՛տելու թեան դարձուց սէրը :

Երբ մեռած է մէկու մը խիղճ

Բոլոր մեղքերն գործէ անխիղճ .

Ե՛յնպէս մարդէն դու միշտ վախցիր ,

Որչափ կրնաս հեռու կեցիր :

Ե՛ս գիտէի հեռու կենալ

Թէ որ տէրըս մատնիչ չըլլար .

Ե՛նգիտու թեամբ նա զիս մատնեց ,

Ե՛լ սա անգու թ դառն տանջեց :

Գրնաց փեսիս ամբաստանեց ,

Իր մըրովը զիս մըրոտեց .

Որդւոյս համար կը զրպարտէր ,

Հարազատ չէ կ'ըսէ եղեր :

Ե՛ս պատճառիս համար ահա

Մահուան վճիռ ես ընկալայ .

Ե՛լ դահիճներ մեզ գըթացին ,

Հոս ձգելով թողին գացին :

Ե՛յսպէս ուրեմն Սպիրիտին՝

Որ կ'երևնար արդար ըզգօն ,

Յամեն բարեաց անմասն ելաւ

Եւ իւր չարեաց պատճառ եղաւ :

Վախ զի պէտք չէր այնչափ հաւտալ

Եւ օտարին ձեռք զիս թող տալ .

Երկրորդ արդար չէր դատաստան ,

Երբ պատժեց զիս առանց հարցման :

Եւ իմ մեղքերս զիս պատժեցին ,
 Իմ դահիճներ յանցանք չունին .
 Ես չուզէի աշխարհ մըտնել ,
 Ախտս ոտքի տակ պէտք չէր առնել :

Եւ որ համար ամեն փորձանք
 Եկաւ գըլխուս մինչև հիմակ .
 Բայց ո՛վ որ չար ուզեց ինձի ,
 Եստուած անոնց տայ թող բարի , :

Մարդն որ ըսած խօսքերս լռսէր ,
 Երցունքներով գետին թըրջէր .
 Եւ չքերն աչքերս դիտէր անթարթ ,
 Եւ մորմոքէր սիրտն անընդհատ :

Երբոր տեսայ ոտքըս կ'իյնայ
 Օ արմանալով ետ քաշուեցայ .
 Գետնին վրայ ընկած , կ'ըսէ ,
 “ Ավ Տիկին իմ , դու ինձ ներէ :
 Չար Գողոնն էր որ զիս խաբեց ,
 Ես զիս խնայուց գըլխէ հանեց .
 Բայց ինձ պէտք չէր անոր հաւտալ :
 Եւ յնպէս անգուժ պատուէր մը տալ , :

Խեղճ ընելով երբ նա կուլար ,
 Կըտոր կըտոր իմ սիրտս կ'ըլլար .
 “ Փուճ տեղ , ըսի , ինչ լաս վըրաս ,
 Երբ օգնել ինձ չես ձեռընհաս :

Թող ամեն մարդ իր վերան լայ ,
 Որ մեղքերէն արդարանայ .
 Ե՛լ ոտք կայնէ բաւական է ,
 Իմ սրբտիս ցաւ ինձի կ'օգտէ ,” :
 “ Ես եմ, կանչեց , Սպիրիտին ,
 Մ'օլորեցուց զիս չար Գողոն .
 Ո՛հ ես աս մեղքն ինչպէս քաւեմ ,
 Ի՞նչ երեսով դէմդ ելլեմ ,” : —
 “ Սպիրիտին դո՛ւ ես իմ տէր ,
 Չեմ հաւատար , մի զիս խաբեր .
 Ո՛վ Լստուած իմ, ինչ կը լսեմ ,
 Լըդեօք 'ի քուն երանգ տեսնեմ ,” :
 Մէկէն ինքզինքս ես կորուսի ,
 Չիյտեմ մէյմ'ալ երբ աչք բացի .
 Տեսնեմ նա ալ իրար անցած ,
 Գուր է բերեր լընու վերաս :
 Եւ երբ քիչ մը ես զիս գրտայ ,
 Իմացայ որ տրդաս կուլայ .
 Լըի գերկըս որ չիվախնայ ,
 Ա ազեց ինկաւ հօրը վերայ :
 Եւ ալ թեւեր բացաւ գրրկեց ,
 Հայրական գութ սիրտը ճըմլեց .
 Շոյեր երեսն ու կը սրագնէր
 Եւ գրկախառն սիրով մայլեր :

Եւ ես կ'ապշիմ տրդուն վրայ
 Եւրդեօք ինչ բան ներսէն կը զգայ ,
 Տօրը գրրկէն չուզեր ելլել ,
 Եւ կամ աչքէն հեռացընել :

Մէյմը կուգար զիս կը դրրկէր
 Եւրցունքներով ձեռքըս սրբէր ,
 Մէյմ'ալ Տօրը վերայ կ'երթար՝
 Կը պըլլուէր վիզը կ'իյնար :

Եւյնպէս զարմանք բաներ կ'ընէ ,
 Ար տեսնողներ լաց կը շարժէ .
 Եւ որպէս թէ միջնորդ կ'ըլլայ
 Ար իր սիրով մեր սիրտն որսայ :

Բայց իմ սիրտըս չիյտեմ ինչու
 Պաղ կը շարժի զինք սիրելու .
 Ա'ուրախանամ ողջ տեսածիս ,
 Բայց չէր անցներ հին ցաւ սրբտիս :

Եւյսպէս ահա ատելու թիւն
 Խոչընդոտն է սրբտի մարդուն ,
 Եւ ի՞նչ մընաց սէր իմ փրրկչիս ,
 Երբ չեմ ներեր ես ընկերիս :

Ա'ըսեմ, Ա'ստուած թող իմ մեղքիս ,
 Ես չեմ հաներ նենգը սրբտիս .
 Ի'նչպէս ուրեմն ըսեմ թող ինձ ,
 Երբ չեմ թողուր պարտապանիս :

Լ՛հա այսպէս մարդիկ կարծեն ,
 Թէ շնորհքով միշտ լըցուած են .
 Բայց ան ատեն յայտնին գաղտնիք
 Երբոր նորէն խրուովին կիրք :

Ուստի այսպէս փորձէ դու քեզ
 Եթէ արդեօք զ՛ստուած սիրես .
 Լ՛գրիդ առջին բեր թըշնամիդ ,
 Տես թէ աղօթք կ'ընես հանգիստ :

Թէ որ միտքըդ կը շրփոթի ,
 Պէտք չէ ուրիշ վըկայ քեզի .
 Գիտցիր որ դու ոչ թէ զ՛ստուած ,
 Լ՛յլ միշտ քու չար կամքդ ես պաշտած :

Լ՛յս բաները վայրկենի մէջ ,
 Լ՛նցաւ մըտքէս՝ սիրտս թափանցեց .
 “ Լ՛հ , ես ուրեմն այսչափ տարի ,
 Ինքիր կամքիս ծառայեցի ,” :

Լ՛յն ժամանակն ոտքի ելայ .
 “ Լ՛ալով , ըսի , գոչեմ մեղայ ,
 Իրաւ անպարտ եմ ան մեղքէն ,
 Բայց շատ անգամ քեզ դատեր եմ ,” :

Բըռնեց ձեռքէս լալով կ'ըսէր ,
 “ Գեհովափէ , այս քոյ նոր սէր
 Կը փարատէ սըրտիս ցաւեր .
 ()ըհնեալես դու լ՛ստուած իմ Տէր ,

Չեմ արժանի այս պարգևիդ ,
 Շընորհ ունիմ պարգևողիդ .
 Եւ զի Մատուած ես ողորմած .
 Վու գրթ ութ եամբդ ներէ մեղացս :

Գեհովափէ , սիրելիդ իմ ,
 Գիտեմ առջևդ երես չունիմ .
 Բարեխօս լեր առ փրկիչն իմ
 Ար մեղքերուս պատիժ քաւուին .

Գարձիր նորէն տունըդ շէնցուր .
 Սխալմունքներս ինձի ցըցուր .
 Եւ յսուհետեւ առանց քեզի ,
 Բան մը չընեմ ինքրս ինձի , :

“ Խընդրեմ , ըսի , մի տանիր զիս ,
 Չուզեմ երթալ տեղ մը ասկից .
 Ա՛հ , իմացայ դրժուար է ինձ ,
 Եւ շխարհիս մէջ շահիլ հոգիս , ” :

Երբոր աս խօսք ես կ'ըսէի ,
 Արրտիս մէջը նենգ չունէի .
 Բայց նա չուզելս կարծէր նենգով ,
 Աւստի նորէն խնդրէր լալով :

Եւ յլ իմ սիրտըս նորա լացին
 Չէր մեղմանար ամենեւին .
 Երբ մանաւանդ կ'ըսէր երթանք ,
 Կարծես գըլխուս փըլչէր աշխարհ :

“ Երկու սուրի մէջ մընայի ,
 Ո՛ր դին դառնամ՝ սիրարս խոցուի .
 Չերթամ կ’ըսեմ քեզ կը գըթամ ,
 Եթէ երթամ՝ հողիս խըղձամ :

Ընմեղուծեան իմ այս վիճակ
 Ի՞նչպէս թողում իյնամ վըտանդ .
 Ի աւ է մեռնիմ , զիս հոս թաղէ ,
 Օ՛ր մեղանչել ինձ յոյժ դառն է :

Ճըշմարտութեամբ կ’ըսեմ քեզի ,
 Գանելի է աշխարհք ինձի .

Ընչափ զըզուեր եմ մարդկանցմէ
 Որ կը գանիմ ինքս ալ ինձմէ :

Քաշած ցաւերս ի՞նչպէս մոռնամ ,
 Ըշխարհիս ծովն նորէն իյնամ .

Բան չիմընաց գըլխուս բերին ,

Ի՞նչպէս հաւտամ մարդկանց խօսքին , :

“ Ըտ խօսքդ , ըսաւ , մ’ըսեր ինձի ,
 Գիտեմ սիրտըդ շատ ցաւցուցի .

Ըյլ ինչ որ ես քեզի ըրի ,

Նոյն պատիժով զիս պատժեցի :

Երբոր ձեզմէ բաժնըւեցայ ,

Հարցուր մէյմը ես ի՞նչ եղայ .

Օ՛արնըւեցայ սըրտէս խորունկ ,

Դադրում չունէր աչքէս արցունք :

Լ՛յնպէս խիղճրս զիս կը տանջէր ,
 Արդան մը պէս սիրտըս կըրծէր .
 Վասն անօրէն այս իմ մեղաց ,
 Յոյսըս ինծմէ էի կըտրած :
 Տեղ մը նըստիլ չէի կըրնար ,
 Մեղքըս մէկէն առջիս կուգար .
 Աստի ահա անկից 'ի վեր
 Լ՛յսօր տընէս դուրս եմ ելեր :
 Լ՛յնչափ լացի մուտ տեղ փակուած
 Ար աչքերուս լոյսը գընաց .
 Բայց վերջապէս գըլծաց Լ՛ստուած ,
 Ազորմուտեան դուռն ինձ եբաց :
 Դու մի կարծեր թէ իմ կամաւ ,
 Կամ գիպուածը զիս հոս բերաւ .
 Լ՛ստուած ներքուստ սիրտըս շարժեց
 Ձեզ հոս գըտնել ինք յաջողեց :
 Եւ երբ Լ՛ստուած ցըցուց իւր դուտ ,
 Դու կարող ես տանջել անգուտ .
 Եւ հըրաշքով ձեզ ինձ յայտնեց ,
 Արնանս ինքըդ ծածկիլ աչքէս :
 Լ՛յսչափ տարի նըստայ փակուած ,
 ()ը մը հոս գալ սիրտս չէր ուզած .
 Աւսկից միտքըս ինկաւ յանկարծ ,
 Սակայն սիրտըս շարժեց Լ՛ստուած :

Բսկից 'ի զատ խօսք մը չունիմ
 Մի թողուր զիս , սիրելիդ իմ ,
 Թե տուն դառնալդ չուզեր Բստուած
 Կարող է ձեզ ծածկել յաչաց , :
 Բսաւ լռուց , նրստաւ տրտում ,
 Լքէն արցունք չունի դադրում .
 Տառաչանքներ թռչին բերնէն ,
 'Նետի նրման սիրտըս խօցեն :
 Ը առ դէմ կեցայ աղաչեցի ,
 Ոտքը ինկայ թող զիս ըսի .
 Լյլ անօգուտ ինչ ալ ըսեմ
 Պէտք է երթամ ուզեմ չուզեմ :
 Ուստի մէկէն ինկայ գետին ,
 'Նըւիրեցի կամքս արարչին ,
 'Վաւք քո , ըսի , օրհնեալ լիցի ,
 Որպէս յերկինս և 'ի յերկրի , :
 Ելայ անկից առի օրդիս ,
 Չինայեցայ մէյմ'ալ չորս դիս .
 Լռջեն ինկայ կ'երթամ անձայն ,
 Եղնիկներն ալ հետըս կուգան :
 Լյնպէս մտքովս վերացեր եմ ,
 Կոխած տեղըս ես ալ չիյտեմ .
 Մէկ անգամ մը դադայ ետիս ,
 Չեմ հաւատար ինքիր աչքիս :

Քուն չեղածըս յայտնի գիտեմ,
 Որ ըսեմ թէ երազ տեսնեմ.
 Հոս հոն աչքերս կը քայցընեմ
 Հեռու ծառերն մարդ կը կարծեմ:
 Ո՛ր որ վազեմ փուճը կ'ելլամ,
 Ո՛ր որ երթամ պարապ դառնամ.
 Մարդը չիկայ որոնն հոգն է,
 Որդւոյս չըլլանն մէջքըս կոտրէ:
 Ըրիւն քրրտինք թաթխըւեցայ,
 Ըմեն կողմէն անբաղդ եղայ.
 Որդիս մարդն է առեր փախեր,
 Իմ վազվազելս անօգուտ էր:
 Մըխիթարանքս միայն նա էր,
 Ընով ամեն ցաւ փարատէր.
 Թէ որ նա ալ ելաւ ձեռքէս,
 Ընչուչտ խելքէս բաժնըւիմ ես:
 Խօսքըս բերանս էր դեռ կիսատ,
 Գիտցայ փուճ տեղ կ'ընեմ գանգատ.
 Մէկէն դարձայ ըսի մեղայ,
 Յիսուս սուրբ կամքդ օրհնեալ ըլլայ:
 Ո՛հ վայ ինձի ամեն անգամ
 Որչափ ջանամ որ մեղք չիյնամ՝
 Հընար չիկայ կը սըխալիմ,
 Գոնէ մտքովս կը շաղախուիմ:

Եւ քանի մէկ ես խօսք կուտամ

Որ ալ մեղաց մէջ չիմտնամ .

Ի՞նչ է պատճառն , ինչո՞ւ կ'իյնիմ ,

Զըլլայ որ ես ինձ վըստասիմ :

Արովհետեւ կարելի չէ

Որ մարդս իրմով անձին յաղթէ ,

Թէ որ շնորհքով ես չամրանամ ,

Եւ մեն յոյսէս դատարկ կ'ելլամ :

Ուստի Տէր իմ , Տէր բարերար ,

Եւնօգնական զիս թող մի տար .

Խաչող բառնալ միշտ եմ յօժար ,

Խեղճ բընու թեանս դու խընամ տար :

Եւ մեն մէկ բան եկաւ գըլխուս ,

Իայց դեռ չէի 'ի սպառ անյոյս .

Օ աւկիս սէրն որ միտքըս իյնար ,

Եւ մեն ցաւերս սըրտէս կ'ելլար :

Չիմայ ան ալ առիւ ձեռքէս ,

Որ մերկանամ ամեն յոյսէս .

Եւ կից եւեւ չըլլար մեծ ցաւ ,

Ինձի համար աշխարհք անցաւ .

Եւ յհնազանդ է կամքըս կամացդ ,

Մի բաժներ զիս 'ի քոյ շնորհացդ .

Եւ յսուհետեւ դու ես իմ յոյս ,

Օ ի մընացի 'ի սպառ անյոյս :

Ահա Տէր իմ, քուկդ է հոգիս,
 Չարչարէ զիս ինչպէս կամիս .
 Օ ի դու զով որ շատ կը սիրես,
 Աիրոյդ նըշան դառնն տանջես :
 Ասոնց նըման ուրիշ խօսքեր,
 Վաղրում չունէր լեզուս խօսէր .
 Արրտէս չելաւ որդւոյս կորուստ,
 Այլ խընդութիւն ունիմ ներքուստ :
 Քիչ ատենէն վերջը յանկարծ,
 Չայն մը առի քովէս մօտանց .
 Վարձայ տեսնեմ ինչ ձայն եղածն,
 Նորէն սիրտըս տեղէն թընդաց :
 Չիաւորներ ելեր կուգան,
 Աւ կը փայլի զէնքերն վրան .
 « Այս է, ըսի, վերջին վայրկեան,
 Օ իս մեռցընել ահա եկան :
 Սպիրիտիոն խըրկեց զիրենք,
 Արրտին մէջէն չէ ելած նենգ .
 Պէտք չէր ինծի խօսքին հաւտալ,
 Ա՛վ եղածնիս իմացում տալ :
 Ասըն զի նա երբոր լըսեց,
 Արեսին գոյն մէկէն նետեց .
 Գութ չունենալն երբ գիտէի
 Պէտք չէր իրեն հաւատայի :

Լ'նշուշտ տարաւ որդիս մեռուց ,

Եւ աչքերուս լոյսը կորուց .

Լ'յլ երանի տամքեզ որդեակ ,

Լ'նանց փառաց եղար ժառանգ :

Թող ցամաքի աչքիս արցունք

Չողբամ բընաւ մահուանրդ սուգ ,

Օ ի որդեակ իմ դու ոչ մեռար

Լ'յլ ընդ հրեշտակըս դասեցար , :

Ես խօսքերով միտքս էր մայլած ,

Մէյմ'ալ որդիս տեսայ յանկարծ .

“ Մայր իմ, կ'ըսէ , քալէ երթանք ,

Ինչո՞ւ կեցար դու հոս մինակ , ” :

Ես կարծելով տեսիլք տեսայ

Որդիս յերկնից եկեր ձայն տայ ,

Պըլլըւեցայ վեղէն 'ի վար ,

“ Որդեակ , ըսի , զիս հետըդ տար , ” :

Արկնեց որդիս “ Ի՞նչ կ'ըսես մայր ,

Ի՞նչպէս կըրնամ քեզ հոս թող տալ ,

Լ'հա հայրըս կանչեց մարդիկ .

Ա'ըսէ երթանք ուշ մընացինք , ” :

Տեսնեմ արդուն խօսք էր իրաւ ,

Սպիրիտին քովըս եկաւ .

Իրունեց ձեռքէս կ'ըսէր , “ Երթանք ,

Իմ մարդիկս են , չըլլայ վախնաք , ” :

Ըս խօսքն անոր համար կ'ըսէր ,
 Կարծեօք վախցածս իմացեր էր .
 Ես ամօթէս բան մ'ալ չըսի ,
 Վիտցայ զուր տեղ զինք դատեցի :



ժ .

Ուչ էր ատենն , ճամբայ ելանք ,
 Գիշեր մըթուն քաղաք հասանք .
 Բայց ինձի մեծ եկաւ զարմանք
 Երբ պալատին դռունէն մըտանք :
Ուր որ ջահեր կը վառուէին
 Տեսայ բոլոր մըթնած էին .
 Տունն ու տեղը սուգ էր պատած .
 Լմենուն աչքն արցունք լըցուած .
 Իրաւ իմ սիրտս ալ լեցուեցաւ
 Բայց Յիսուսէս նոր ոյժ եկաւ .
 Ըսի ինչո՞ւ կեցեր կուլամ ,
 Լ՞յսպէս պիտի խօսքէս դառնամ :
Ո՛վ Լստուած իմ , ուխտըս ուխտ է ,
 Լ՞չքէս արցունք պիտի չելլէ .
 Ըսի բանան դուռը մատրան
 Եւ Լստուծոյ գոհութիւն տան :

Դեռ աղօթքնիս չէր լամրնցած

Կարծեմ քաղաք մարդ չիմրնայ ,

Լմենքն եկեր հոն են ժողվեր՝

Կարելի չէ մեզ դուրս ելլել :

Մեզ որ տեսան բացին ճամբայ ,

Մըտայ տունըս լաթերս հագայ .

Ինչ որ ձեռքովս էի պահած ,

Գըտայ ամբողջ , մարդ չէր դրպած :

Բոլոր գիշեր մինչև 'ի լոյս

Չէին դադրեր գալ աչքի լոյս .

Երբ զիս տեսնեն կը զարմանան ,

Օարմանք կ'ըսեն, ու փառք կուտան :

Բոլոր տրներ և պալատներ

Հազարաւոր մոմ են վառեր ,

Լուսաւորուած պայծառ փայլեն ,

Յորեկուան պէս լուսաւորեն .

Իսկ բերդերէն թնդանօթներ

Ուրախութեան հրնչեն ձայներ .

Շատ մարդ քունէն մէկէն զարթած

Եղապատառ դուրս է ցատքած .

Յանկարծ այսպէս ուրախութիւն

Օարմանք բերաւ ամեն մէկուն .

Թիէ ամեն բան տեղով պատմեմ ,

Վախնամ ատենս փուճ կ'անցրնեմ :

Իշխանները երբոր տեսայ՝

Գողոն մէկէն միտքըս կ'իյնայ .

“Յանցանքն , ըսի , թող չիյիշուի ,

Միայն չուզեմ որ հոս գըտուի ,” :

Քովի մարդիկ տեսնեմ խընտան՝

Օարմանալով խօսքիս վըրան .

“Գըտաւ , կ'ըսեն , նա իւր պատիժ ,

Լ'նմեղներուն անգուժ դահիճ ,” :

Մէկէն ցաւը սըրտիս զարկաւ ,

Որ չըլլայ թէ հոգին կորաւ .

“Սպիրտիոն տէր իմ , ըսի ,

Խնդրեմ Գողոն թող չիմեռնի ,” :

“Շատ չէ , կ'ըսէ , զինք խըրկեցի ,

Որ մեղքերը շուտով քաւուի .

Չորս ձիերու պոչ կապուեցաւ

Քարուտ տեղուանք քաշկըռտուեցաւ :

Թող քայքայուի բոլոր մարմին

Լ'յնպէս անգուժ անօրինին .

Չարին ոսկերք չարաւ ցըրուին ,

Չեն արժանի գերեզմանին ,” :

Իրաւ սըրտիս եղաւ մեծ ցաւ

Ինչո՞ւ հոգին կորսըւեցաւ ,

Բայց ի՞նչ ըսեմ երբ չիկայ ճար ,

Իւր կորստեան ինքն է պատճառ :

Ընդ ափսոս այն շնորհքին ,

Օր ըստացար յաւազանին .

Կորուսեր զայն խաբամամբ չարին ,

Մընայ քեզ հուր յաւիտենին :

Ըլ ինչ միթէ կայ չափ սահման

Ըստուածային ողորմութեան .

Կարելի է 'ի կէտ մահուան

Տըւաւ իրեն շնորհք զըղջման :

Քաղաքացւոց խընտումն ըսես ,

Տօն կատարեն մեծահանդէս .

Ուրախութեամբ սըրտեր լեցուաւ ,

Սուգ տըրտմութիւն մէկէն վերցաւ :

Ըմբաներով չըսեմ տարուով

Յընծութիւն էր բոլոր քաղքով ,

Մինչև հեռու աշխարհքներէն

Գան մեծամեծք որ մեզ տեսնեն :

Մեծ իշխաններ ընտանիքով ,

Շատերն եկան մեծ փափաքով .

Չեկողներն ալ պարգևներով

Ուրախակից եղան սիրով :

Ըմեն մէկ բան պատմել կուտան ,

Ինչ որ գըլխէս եկան անցան .

Կ'ուզեն նաև գըրով թողում

Մեզմէ վերջն ալ եկողներուն :

Բայց ես առաջ քան զամեն քան
 Պէտք է խորհիմ հոգւոյս վերան ,
 Ար չըլայ թէ այնչափ տարուան
 Լ շխատանքներս փուճը երթան :
 Երբոր նորէն եկայ քաղաք ,
 Պէտք է քաշեմ նոր աշխատանք .
 Գիշեր ցորեկ ըլլայ իմ ջանք ,
 Ար ժամանակս չանցնի դատարկ :
 () ր մը նըստեր էի մինակ ,
 Մըտած էի իմ անցեալ կեանք .
 Սըրտիս բաղձանք մ'եկաւ երթալ ,
 Բընակու թեանս տեղը տեսնալ :
 Մեծ բաղմու թեամբ ելանք գացինք ,
 Քանի մը օր հոն մընացինք .
 Լ յնպէս աղուոր սըրտբաց տեղ էր
 Ար չեն ուզեր թողուլ ելլել :
 Իմ ալ սիրտըս շարժեց Լ ստուած
 Ար փոխարէն իւր այս բարեաց'
 Շինել տամ հոն փառաւոր վանք ,
 Լ մենօրհնեալ կուսին պարծանք :
 Լ մեն մէկ քան պատրաստեցինք ,
 Շուտով շէնքը առաջ տարինք .
 Արովհետեւ շատ վարպետներ :
 Լ մեն երկրէ հոն բերուած էր :

Երբ լըմնցաւ եկեղեցին ,

Մեծ հանդիսով զայն օծեցին .

Բոլոր քաղաքն հոն էր ժողված ,

Ուրախութեւ կ'օրհնեն զՍտուած :

Սանքին մէջի բընակիչներ

Եւ սրբակաց ճրգնաւորներ .

Որոնց բարի օրինակը ,

Բարանչացուց բոլոր ազգը :

Եկող գացող միշտ պակաս չէ

Ուխտաւորներ ամեն երկրէ .

Ես ալ շատ օր հոն կը կենամ ,

Եւ մահուանէս վերջն ալ հոս գամ :

Ես պատմութիւն էր իմ վարուց՝

Որ ցանկայիր լսել վաղուց .

Բլայ քեզ այս սիրոյս ընծայ ,

Որ կարդալով սիրտըդ ցընծայ :



ԺԱ.

Մարդուս կեանքն է փորձութեան մէջ
 Նրնաժ օրէն մինչև 'ի վերջ .
 Եթէ աղքատ եթէ հարուստ ,
 Չըլլար խաչէ տալ մեզ փախուստ :
 Գիտցիր մարդիկ միշտ ծուռ դատեն ,
 Խաչ չունեցողն արդար կարծեն .
 Բայց ճշմարիտ արդար է նա
 Ար խաչն առեր սիրով կ'երթայ :
 Մեղաւորն ալ ունի միշտ խաչ ,
 Բայց վերջ չունի տրտունջն ու լաց .
 Իսկ բարեպաշտն որչափ տանջի ,
 Ե՛նչափ սրբտին սէրը կ'աճի :
 Աստի իրօք նա է արդար
 Ար իւր խաչին չիտժգոհար .
 Թէ և մարմինն հըրով այրես
 Նա փառք կուտայ ծիծաղերես :

Բայց ոչ երբէք արդար է նա
 Որ տանի խաչն միշտ ակամայ .
 Մարդէ եկած կարծեց իւր ցաւ ,
 Ուստի հանգիստ մը չունեցաւ :
 Ով որ սիրտը նախանձ ունի
 Նա դիւաց հետ դաշինք ունի ,
 Եւ որ դիւին է դաշնակից
 Վրբիստոսի չէ մասնակից :
 Նա միայն է խաչէ ազատ
 Ով իւր խաչէն չունի դանգատ .
 Եւ նա յաւետ բարեբաղդիկ ,
 Ով որ խաչը տանի հեզիկ :
 Թէ Վրբիստոսի ես աշակերտ ,
 Չանա քալել միշտ իրեն հետ .
 Երբ նա խաչով անցուց իւր կեանք ,
 Պէտք է խաչով ըլլանք ժառանգ :
 Թէ որ Մատուած իւր միածնին
 Զի խընայեց մատնեց խաչին .
 Խաչ որ չունիս դու մի կարծեր՝
 Սըրբոց փառքին ըլլալ ընկեր :
 Թէ Մատուծմէ խաչդ համարիս ,
 Մնչուշտ սիրով զայն կը տանիս .
 Իսկ երբ մարդէ եկած կարծես ,
 Կարելի չէ որ համբերես :

Ընոր համար չես գրտներ մարդ
 Բողոքովին խաչէ ազատ .
 Բայց նոյն խաչը ոմանց պարծանք ,
 Նոյն և այլոց է խիստ տանջանք :
 Աստի հարկաւ մի և նոյն խաչ ,
 Արլայ ոմանց առիթ կենաց .
 Նոյնպէս ոմանց պատճառ մեղաց ,
 Ետն ալ անյոյս կորաւ գրնաց :
 Եւ ճրջմարիտ քրրիստոնեայն
 Պահէ փրկչին միշտ պատուիրան .
 Գիշեր ցորեկ իւր փոյթն և ջան ,
 Քրրիստոսի ըլլալ նրման :
 Սարգուս բաղձանք միշտ է անյագ ,
 Անեցածով երբ գոհ եղանք .
 Բայց երբ հանգիստ է խրղձմտանք ,
 Բարի վարքով յազի բաղձանք :
 Օ ի երբ տիրէ մարդ իւր անձին ,
 Յայնժամ բաղձանք լցեալ հանգչին .
 Եւ նա միայն տէր է անձին ,
 Ար կը յաղթէ կրրից սրբաին :
 Եւ ճրջմարիտ յաղթող կրրից ,
 Հրնազանդ է նա ամենից .
 Ինչ որ ընէ կը մրտածէ ,
 Թէ է բարի՝ ի գործ գրնէ :

Ընմրտութեամբ դու մի գործեր
 Եւրոց խօսքեր մ'արհամարհեր .
 Ինչ որ չկտես հարցուր սորվէ ,
 Եւ մի ըսեր Ըն ալ ո՞վ է :

Ինքնահաւան մարդուն սիրտը
 Միշտ անհանգիստ կ'ընէ զինքը .
 Իր ըրածէն ինքն է անգոհ ,
 Թէ և գրբսանց ցուցրնէ գոհ :

Խոնարհ մարդուն սիրտն է խաղաղ
 Ըշխարհք փրչի ՚նա չունի վախ .
 Իսկ ամբարիշտն ամբարտաւան
 Օ իրկ ՚ի յուսոյ է փրկութեան :

Սիրէ զամենքն եղբայրաբար ,
 Ըյլ ոչ զամենքն ընտանեբար .
 Սիրէ այնչափ որքան հարկ է
 Ար այնչափ սէրդ քեզ չանպատուէ :

Նրնազանդէ ամեն մէկուն ,
 Բայց մի հաւտար քեզ ամենուն .
 Գործքերուդ մէջ եղիր արթուն ,
 Մի բանար սիրտդ անփորձ մարդուն :

Չափ դիր բերնիդ խօսած ատենդ ,
 Գնա պրտուղ քաղեն խօսքէդ :
 Բան մը չըսես չիմրտածած ,
 Ար չըլայ թէ վերջն ափսոսա :

Ինչ որ քեզի չեն հարցրներ

Մէկէն 'ի մէկ մէջ մի մըտներ .

Խեղբորդ միայն տուր ան բանին

Որուն խընամք քեզ յանձնեցին :

Բոլոր յոյսըդ դիր դու յԱստուած

Որ փորձու թեանց դէմ ուժովնաս ,

Օ՛ր ով իւր յոյսն անձէն կըտրէ ,

Եւ Քրիստոսիւ զինեալ յաղթէ :

Փորձու թեանց դէմ արթուն կեցիր ,

Մի վստահիր թէ յաղթեցիր .

Օ՛ր նա միայն կ'ըսուի յաղթող ,

Որ մինչ 'ի վերջն է համբերող :

Մի ուրիշին գործը քրններ

Եւ մի յանդուգն վճիռ կըտրեր .

Լճքըդ միայն վըրադ դարձուր ,

Քու ախտերուդ արմատ չորցուր :

Դու ամենուն ներէ սիրով

Միշտ գըթ ու թիւն ցուցրնելով ,

Եւլ անաչառ պատժէ ըզքեզ ,

Երբ պակսու թիւն վըրադ տեսնես :

Ի աւ է որ քու կամքըդ կոտրես

Քան թէ այլոց սիրտը աւրես .

Օ՛ր շատ հեշտ է զինքը ուղղել ,

Քան թէ այլոց հըրամայել :

Խաղաղութեամբ կեանք կ'անցընես
 Թէ որ հանգիստ դու չիխնդրես .
 Եւ ամենէն փառք կը գրտնես ,
 Թէ քեզ բանի տեղ չիդընես :
 Թէ որ դուն քեզ լաւ մը քըննես ,
 Շատ սպակտութիւն վըրադ գրտնես .
 Ուստի լաւ է զինքը զըսպել ,
 Վասն թէ այլոց գործը քըննել :
 Սէրն սկըսի միշտ իւր անձնէ ,
 Ուստի դու նախ ըզքեզ սիրէ .
 Ինչ բան չուզես որ դու լըսես ,
 Զըլլայ այլոց համար ըսես :
 Ըմեն աղէկ քեզի կ'ուզես ,
 Ըղէկ ըլլալ ինչո՞ւ չուզես ,
 Ուրիշները խըրատելուդ
 Նախ փընտըռէ անձինդ օգուտ :
 Ինչ որ այսօր կըրնաս ընել
 Ընհոգ մ'ըլլար , վաղուան ձըգեր .
 Օ՛ր այս օրըդ որ անցուցիր
 Գիտցիր մէյմ'ալ ձեռքըդ չանցնիր :
 Միշտ անուանի մարդիկ եղան
 Ըյս աւուր յարգ որոնք գիտցան .
 Թէ ատենիդ չիգիտցար յարգ
 Գիտցիր որ դու միշտ ես անարգ ,

Եպէ իրօք այնպէս ըլլաս
 Ինչպէս կ'ուզես որ երևնաս ,
 Ինձ ինչ օգուտ հարուստ սեպուիմ
 Երբ ուտելու հաց ես չունիմ :
 Քեզ ինչ օգուտ շատ բան տեսածդ
 Երբ չես ջանար ճանչնալ քու անձդ .
 Չիկայ քան զայս մեծ գիտութիւն
 Ճանչնալ մարդուս զիւր պակասութիւն :
 Եւ որչափ որ դուն քեզ ճանչնաս
 Եւ յնչափ հոգւով խոնարհ կ'ըլլաս .
 Խոնարհութիւն զարդ է անձին ,
 Խոնարհութիւն դուռն երկնային :
 Սուտ աշխարհիս ամեն բարիք
 Տրղայական են խաղալիք ,
 Ա՛չ խընդութեան պէտք է հաւտալ ,
 Ա՛չ տրտմութեամբ թըմրիլ մընալ :
 Ուտի չըլլայ սիրտըդ կապես
 Երջանկութիւնդ հոս է կարծես .
 Երազի պէս կ'անցնին օրերդ ,
 Գործքերդ չանցնիր մընան քու հետդ :
 Մահուան օրըդ միշտ մըտած է ,
 Եւ յսօր վերջի օրդ է կարծէ .
 Եւ յնպէս գործքըդ կարդաւոր է
 Ար մահն ըզքեզ պատրաստ գըտնէ :

Մեռնելու օրդ թէ գիտնայիր
 Դու մեռնելէն չէր վախնայիր ,
 Օ ի գիտացեալ մահ ոչ է մահ ,
 Լրդարն մահէն չունենար ահ :
 Քանզի արդարն ոչ մեռանի ,
 Լ՛յլ քուն կ'ըլլայ յապահովի .
 Լնչուշտ օր մը նա կը զարթի ,
 Բայց վայ երբ մարդ հոգևով մեռնի :

Մեռցուր քու կամք որ ողջ մընաս ,
 Բզգաստ կեցիր որ քուն չըլլաս .
 Փոքրիկ չարէն գայ մեծ վընաս ,
 Փոքրէն մեծը շուտով կ'իյնաս :

Առջե՞ս ըլլալ քու անձին տէր ,
 Լնվախճան բան դու մի գործեր .
 Ախճան գործոցըդ դիր զ՛ստուած
 Ար չըլլայ թէ վերջը զըղջաս :

Թէ որ ՚ստուած է թըշնամիդ՝
 Օ ուր է օգնել բարեկամիդ .
 Բայց մի վախնար թշնամիէ ,
 Երբ կըտրած չես յոյսդ ՚ստուծմէ :

Թէ բարեկամ չէ մարդ անձին ,
 Լ՛յլք բարեկամ միայն գանձին .
 Այ է անոր որ ըստըկով
 Օ ինքն ընկըղմեց աշխարհիս ծով :

Յոյսըդ բոլոր դիր դու Ղստուած ,
 Թէ նա ըստեղծ ըզքեզ հաւտաս .
 Յիսուս փրկչին արեան գին ես ,
 Ինչո՞ւ հողւոյդ յարգը չիյտես :
 Իւր գոյութիւն մէկն որ ճանչնայ
 Չըլլար ըսել Ղստուած չիկայ .
 Բայց մարդ զինքը ինչպէս ճանչնար
 Թէ իւր հոգին անմահ չըլլար :
 Օ՛ի մարդ զինքը հողւով ճանչնայ ,
 Օ՛ինք չիճանչցող անբան կ'ըլլայ .
 Կամ անբան եմ պէտք է ըսես ,
 Կամ ըստեղծողը ճանչնաս պաշտես :
 Աստի երբ դու քեզ կը ճանչնաս ,
 Ըստեղծողը ալ պէտք է ճանչնաս .
 Հոգի չունիմ չըսես խեղաս ,
 Բաւժ սուտէդ դու կ'ամրչնաս :
 Ի՞նչպէս հոգի չունիմ կ'ըսես ,
 Երբ մարդկութեամբ պարծիլ կ'ուզես .
 Ի՞նչպէս Ղստուած չիկայ ըսես ,
 Երբոր հողւով ճանչնաս ըզքեզ :
 Աստի հարկ է խոստովանիս ,
 Կախ թէ անմահ հոգի ունիս ,
 Երկրորդ ճանչնաս քոյ արարիչ ,
 Երդարադատ քննող սրբտից :

Ըս բաներըս մէկն որ գիտնայ ,
 Հոգւոյն յարգը լաւ կը ճանչնայ ,
 Եւ թէ մարմնոյն շատ երես տայ ,
 Քիչ ատենէն պիտի զըղջայ :

Ըստ մարմնոյ չափով սիրէ ,
 Որ անչափ սէրդ քեզ խաղք չընէ .
 Հոգւոյդ պատիւ լաւ պահպանէ ,
 Զըլլայ մարմնոյդ հոգւոյդ տիրէ :

Քիչ օրուան է աս սուտ աշխարհք ,
 Դու մի փոխեր անդիւի կեանք .
 Կամ հոս պէտք է մարմնով տանջինք ,
 Կամ հոն հոգւով մարմնով այրինք :

Երկու թևով թռչի թռչուն ,
 () գնական է մէկը մէկուն .

Թէ որ պակսի ուժը մէկին ,
 Մէկէն 'ի մէկ կ'իյնայ գետին :

Սապէս հոգին ոյժ է մարմնոյն ,
 Եւ մարմինն է գործի հոգւոյն .
 Թէ միութեամբ արիանան ,
 Ընմահ փառաց կ'արժանանան :

Դարձեալ երկու թևով մարդիկ
 Թռչին վայլեն երկնից բարիք .
 Հոգւով ամբիժք և միամիտք
 Մարմնով մաքուրք և բարեսիրտք :

Դատումն հողւոյդ ըլլայ բարի ,
 Եւ չի հակի մարմինդ չարի .
 Յայնժամ հողւով տեսնես զՄատուած ,
 Սիրտըդ է միշտ սիրով մայլած :
 Հոն է սիրտըդ ուր է քու սէրդ ,
 Դու լաւ քրննէ թէ ուր է սիրտդ .
 Թէ փուճ բանի կապեցիր սէր ,
 Ուրացեր ես գիտցիր քոյ տէր :
 Օ ի Մատուած է միշտ սրբտից տէր ,
 Իրեն համար է ըստեղծեր .
 Օ ի թէպէտ և անյագ է սէր
 Սակայն յագի աստուածասէր :
 Ուստի մի դու ըզքեզ խաբեր՝
 Մեն բանի սիրտըդ կապեր .
 Բաց Մատուծոյ ինչ ալ սիրես ,
 Չի հանգչիր սիրտդ , միշտ հաւաչես :
 Օ ի Մատուծոյ սիրոյն նըշան
 Մնդորրութիւն սրբտի միայն .
 Խղճմտանքըդ երբ չէ հանգիստ
 Գիտցիր Մատուած չէ 'ի սրբտիդ :
 Սէրն Մատուծոյ՝ մեզ կ'արծարծէ ,
 Միշտ քաղցրութեամբ ըզմայլած է ,
 Թէ քաղցրութիւն չըզգաս 'ի քեզ
 Մատուծոյ հետ միացած չես :

Լստուծոյ հետ կը միանաս ,
 Երբ մէկ է կամքդ անոր կամաց .
 Ինչ որ խօսիս ինչ որ ընես ,
 Կամքն Լստուծոյ միշտ կը խնդրես :

Թէ որ սրբտիդ խորը մտնաս
 Եւ քու վերագդ միշտ մըտմբտաս ,
 Մէկէն տէրըդ հոն կը գտնաս
 Լնոյշ ձայնովն զըւարձանաս :

Երբ Լստուծոյ հետ միանաս ,
 Քաղցր սիրով կը սքանչանաս .
 Մարդիկ ինչ ալ խօսին ընեն ,
 Շրիտթելու քեզ կարող չեն :

Օ՛ր Յիսուսիդ սէրն յաղթող է՝
 Սիրտըդ իրեն կը գրբաւէ ,
 Եւ միշտ ներքուստ քեզ կը սփոփէ ,
 Յաւ տրբտմութիւն սրբտէդ մերժէ :

Դու քու կամքըդ մի փրնտրուեր ,
 Թէ Յիսուսիդ՝ կամքդ ես տըւեր .
 Քանզի անկէց մեծ սէր չիկայ
 Երբոր մէկը կամքն ուրանայ :

Ինչ ճրգնութիւն կ'ուզես ըրէ ,
 Թէ և մարմինդ կըրական այրէ՝
 Քանի որ դու կամքըդ պաշտես ,
 Միշտ ըստեղծողդ քեզմէ բաժնես :

Վասն Մատուծոյ թողուլ զՄատուած ,
 Մաքանս շատին խելք չէ հասած ,
 Միայն գիտէ առաքինին ,
 Ար հընազանդ է իւր մեծին :

Ինչ որ իրեն հըրամայեն ,
 Չի երկբայիր կ'ընէ մէկէն .

Օ ի կուրորէն հընազանդի ,
 Թի և միտքը չի համոզուի :

Նա է միայն կամքն ուրացող՝
 կամքն Մատուծոյ կամաց յանձնող ,
 Ինչ որ մեծին բերնէն լըսէ ,
 Մատուծոյ կամքն աս է կ'ըսէ :

Իսկ նա որ իւր կամքին լըսէ՝
 Թի և թըռչի երկինքն ելլէ ,
 Մի հաւատար կամապաշտ է ,
 Մատուծոյ տեղ իր կամք պաշտէ :

Յոյց կուտայ թէ սիրէ զՄատուած
 Արչափ ազատ է փորձանաց .
 Երբոր իյնայ նեղութեան մէջ ,
 Գանդատանաց չես գըտներ վերջ :

Մորդ այս ոչ է ճշմարիտ սէր ,
 Մաքեալն ալ ինչպէս կ'ըսէր .
 Օ ի չէ մեծ ինչ՝ ըլլալ զըւարթ՝
 Երբ շընորհաց ցող գայ առատ :

Միշտ ճրշմարիտ աստուածասէրն

Յամաք ատեն բորբոքէ սէրն .

Օ ի չիք քան զայն թանկագին սէր ,

Որպէս սիրելն երբ ոչ գոյ սէր :

Ընաքինի մարդու համար՝

Ըսկից եւել մեծ խաչ չըլլար ,

Երբոր տեսնէ սէրը մարած ,

Եւ արտասուքն աչքէն ցամքած :

Որովհետեւ հրնար չիկայ

Որ մարդուս սիրտ միշտ նոյն մընայ ,

Ըստուածային սիրոյն կըրակ ,

Մարած կ'ըլլայ շատ ժամանակ :

Բայց և այնպէս չիգանդըտիր ,

Ըլլ միշտ անձին է մեղադիր .

Խոնարհութեամբ կուլայ կ'ողբայ ,

Մինչև ըստուած նորէն գըթայ :

Գիտէ որ յետ ցուրտ ճրմերան

Ար յաջորդէ տաքն ամառուան .

Գիտէ դարձեալ թէ համբերող

Յամենայնի է միշտ յաղթող :

Ուստի պէտք է մենք ալ գիտնանք՝

Թէ ըստուծոյ հաճոյ կ'ըլլանք

Երբ աւելի ենք ցուրտ ցամաք

Քան թէ յորժամ սիրով վառեալք :

Նեղութեան մէջ թէ որ չկնաս
 Համբերութիւնդ ինչով գիտնաս .
 Համբերութիւնդ է փորձաքար ,
 Թէ որ յուսով արիացար :

Նեղութեան մէջ յիշեմք ըզտէր ,
 Ի նեղութեան գոչեմք առ տէր .
 Եւ նեղութեամբ որչափ փորձիմք՝
 Եւ յնչափ յուսով քաջալերիմք :

Եւ որ յուսով կը համբերէ ,
 Եւ անբապառ գանձ համբարէ .
 Օ ի սուրբ հոգւոյն գանձ շնորհաց ,
 Իր սրբաին մէջ միշտ է սրբուած :

Կարելի չէ որ մարդ փրկի
 Թէ նեղութեամբ նախ չսփորձի .
 Եւ այս նրչան մեր փրկուցութեան՝
 Թէ համբերողք եմք նեղութեան :

Աստի պէտք է քաջալերուինք
 Երբ նեղութեամբ կը փորձուինք .
 Օ ի կրրակով փորձի ոսկին ,
 Եւ նեղութեամբ առաքինին :

Մի փրնտրուեր դու հանգիստ կեանք ,
 Կարդա քրննէ Յիսուսի վարք .
 Համբերելու սորվեցուր քեզ ,
 Թէ ճշմարիտ աշակերտն ես :

Ի՞նչպէս կըրնաս աշկերտ ըսուիլ
 Թէ որ իրեն չես նմանիր .
 Ինչ որ բանիւ նա քարոզեց ,
 Ինքը գործքով նախ կատարեց :
 Եւ երբ զինքը մեք հայր կոչեմք ,
 Արդիութիւնն գործքով յայտնենք .
 Նա չիտրարէր չարին բարւոյն .
 Ըրեն անձրև տայ ըստ տեղւոյն :
 Սէնք ալ պէտք է ըլլանք գրթած
 Նա և բուն իսկ մեր թրչնամեաց .
 Թէ քաղցած են՝ կերակրելով ,
 Թէ մերկ ծարաւ՝ խրնամելով :
 Թէ որ ուզեն զըրկել ըզմեզ ,
 Հարկ է ըլլանք համբերող հեզ .
 Թէ շապիկնիս քաշեն առնեն ,
 Բաճկոննիս ալ ձրգենք մէկէն :
 Օ՛ր Եստուած մեր Յիսուս փրկիչ
 Ըմեն բարեաց ինք պարգևիչ՝
 Երբ մերկացաւ յանգութ դահճաց ,
 Դէմ չիկեցաւ գողով Եստուած :
 Ընգութ մարդկանց ձեռք ենք ինկեր ,
 Դանբացրնեն ուսերնուս բեռ .
 Յիշենք մեր տէրն խաչը զըրկեր ,
 Կերթայ խաչուիլ նա առ սէր մեր :

Աջ երեսիդ զարկին աստակ ,
 Գու Յիսուսէդ առ օրինակ .
 Չախ երեսդ ալ դարձուր սիրով ,
 Օ ի նա աստակն էառ թըքով :
 Մարդիկ ըզքեզ նախատեցին
 Ընպարտ տեղը զըրպարտեցին ,
 Թէ ծառայ ես քեզ փրկողին ,
 Յիշէ իրեն ինչէր ըրին :
 Քաղքէ քաղաք կը հալածեն ,
 Շիտակ խօսքդ ալ ծուռ կը մեկնեն .
 Այլ դու հանդարտ անհող եղիր ,
 Առանց տիրոջդ տերև չինկնիր :
 Աղէկութիւն կ'ընես մարդկանց ,
 Դէմըդ դէշն է միշտ պատրաստած .
 Գու մի տըրտմիր , թէ ես անվարձ ,
 Յաւիտենից վարձքդ է անանց :
 Խաղաղութիւն ձրգեմ կ'ըսես .
 Քու հանգիստդ ալ կորսընցընես .
 Այլ դու հանգիստ պէտք չէ ուզես ,
 Երբ Յիսուսիդ աշակերտն ես :
 Աեղծաւոր ես կ'ըսեն քեզի ,
 Ինչո՞ւ սիրտըդ կը խըռովի .
 Խոնարհութեամբ պէտք է լըուես ,
 Ընօգուտ է ինչ ալ ըսես :

Եկաւ Յիսուս կեանք աշխարհի՝

Հրաշքներն էին անքրննելի .

Սամարացի անուն դրրին

Գիւաց կըցորդ դե է ըսին :

Ըղբատ հարուստ չես որոշեր ,

Հասարակաց ցուցրնես սէր .

Ըյլ վերջապէս կը բամբասուիս ,

Փոխան սիրոյ գրտնես չարիս :

Ինչո՞ւ տէրդ ալ հայր աղքատաց՝

Բամբասուեցաւ 'ի մեծատանց .

Եւ վերջապէս հարուստ աղքատ ,

Թող խաչեսցի վրձուեցին դատ :

Թէ Յիսուսի աշակերտն ես

Եւ երբ զՆստուած քեզ հայր կոչես ,

Վարդապետիդ նրման կ'ըլլաս ,

Թէ ըսածներս պահել ջանաս :

Եւ ես ինչ որ հոս գրրեցի

Գիտցիր անձամբ նախ փորձեցի .

Կ'ուզէս հանգիստ կեանքդ անցրնես ,

Պէտք է ախտերդ նախ մեռցրնես :


Եւ որ ցանկայ հոգին շահիլ՝

Հարկ է կամքէն հըրաժարիլ .

Օհ ո՞վ իւր կամքն հոս չուրանար .

Եւ Նստուծոյ հաճոյ չըլլար :

Ծանր էր գրչեսէս անցած բաներ ,
 Եւ դիմանալ անհրնար էր .
 Բայց երբ տիրոջս կամք միտքըս պար ,
 Հոգիս ներսէս մեծ ոյժ կը զգար :
 Գիտէի որ Մատուած ինքն է
 Որ աս բաներս տընօրինէ ,
 Ուստի և ես ուզեմ չուզեմ ,
 Պէտք է որ կամքս կամացն յանձնեմ :
 Բայց երանի տամ ես նրմա
 Որ կամաւ կամքն Մատուծոյ տայ .
 Ինք կամք չունի որ կամենայ
 Միշտ Մատուծոյ կամաց ցանկայ :
 Ուստի և դու սիւ ընթերցող ,
 Մտաբար ըրէ անկրճիղ օղ .
 Վեղ Մատուծոյ ձեռքը միշտ թող ,
 Եւ կիրքերուդ եղիր յաղթող :
 Մըքայութեան փառքը յիշենք՝
 Մնով ամեն վիշտ կը դիւրենք .
 Յիսուան ըլլայ մեզ օրինակ՝
 Մնանց կենաց կ'ըլլանք ժառանգ :



203

